Իր դժբախտության հետևից մարդն ինքն է վազում, հաճախ հասնում է:

Նախրապահին նախիր է պետք, հովվին՝ հոտ, առաջնորդին՝ ժողովուրդ:

Բարի լույս:- Ծափեր:

Ես եկա, որ ձեզ փրկեմ:- Ծափեր:

Ես ձեր ծառան եմ:- Ծափեր:

Հայրենիքը ձերն է, իշխանությունը՝ մերը:- Բուռն ծափեր: Պետություններն իրար ուտում են, ժողովուրդներն իրար ուտում են, ազգերն իրար մեջ իրար ուտում են, ընտանիքներում իրար ուտում են, մարդ ու կնիկ, հարս ու սկեսուր իրար ուտում են, մարդն ինքն իր մեջ իրեն ուտում է:

Մարդ...

Մնացինք նստած... ժամը քանիսն եղավ:

ՄՈՎՍԵՍ

Ո՛չ առաջինն ես, ո՛չ վերջինը: Էս աշխարհ գալը հերթով ա, պիտի գնաս, որ գան: Հերթում քո գնալուն սպասող կա:

Որ շատ չվախենաս, որ շատ չտանջվես, սև հողից ա դուրս գալիս կանաչ ծառը, կարմիր վարդը, սպիտակը, դեղինը... Սև հողից:

Նաստյան մի ծաղկանոց ուներ՝ եդեմական դրախտ...

Ուհաննես, մոտ արի, նստիր: Էդ ի՞նչ ես բերել ինձ համար: Դամբո՛ւլ, կուլտուրական ասած՝ սալոր: Արա, էդպես շաշ էլ մնացիր, արա, դամբուլն ի՞նչ ա, որ տանում ես հիվանդին: Տո, անշարժ ջուր, հիվանդին խնձոր կտանեն, նուռ:

Կարմիր նուռն էլ ա սև հողից...

Հա, մի անթիքա բան, հարգի միրգ, հարգի... Կոլխոզի դաստիարակած: Էս ո՞նց եղավ Աստված քեզ ինձ ընկեր արավ: Մի կյանք՝ ծերից ծեր դու իմ վկան ես, ես՝ քո: Դու՝ իմ շնորհքի, ես՝ քո անշնորհքության: Հիմի եկել ես ինձ ճամփա դնելու, բայց տեղյակ չես, որ քո մայրիկ Հեղուշն ինձ վաղուց էր ճամփու դնում, շատ վաղուց... Ուհաննես, գլխիդ մատաղ, ես էնքան բան գիտեմ, որ դու չգիտես ու շատ էլ լավ ա, որ չգիտես, ինչի՞դ ա պետք: Էդ բաները դու մարսող չես...

Վկա ես, այո, բայց իմ հոգու վկան չես...

Ուհաննես ջան, քեզ պահի, պահի, լաց չլինես: Խեղճուկ ա տեսքս, քոսոտել եմ, բայց մահից չեմ վախենում՝ հաշիվ տալուց եմ վախենում: Էնտեղ հոգիներ կան, որ սպասում են իմ պատասխաններին:

Էս Լենին-Ստալինն ինչի՞ եկան, որտեղի՞ց եկան... Էս ժողովուրդ ասածդ էս ի՞նչ բան ա: Մի մարդը միլիոններին ո՞նց ա հիմարացնում, ենթարկում... Սատանի գործ ա, սատանի:

Ուհաննես ջան, դու ի՞նչ իմանաս՝ ինչքան եմ դառն ապրել, դառը, դառը, դառը... Իմ ծնածն ինձնից խլեցին, իմ երկիրն ինձնից խլեցին, իմ շնորհքն ինձնից խլեցին: Ես իմ Կարոյին իրենց համար էի ծնել: Իմ սերն էլ կորցրի, իմ մեղքով... Ես ի՞նչ իմանայի, որ իմ սիրտը էդ բանն ինձ չի ներելու:

Վեր կացա գնացի: Ի՞նչ խուտոր, ի՞նչ Նաստյա: Կոլխոզների խոշորացում են արել, խոշորացումների մեջ մարդը կորել ա, գնա՝ թե գտնես: Հսկա մի երկիր, մի հատիկ մարդ: Մարդն ի՞նչ ա որ սրանց համար: Թե աքսորներում փչացրին, թե սիբիրները գնաց ծնողների հետևից, թե փախավ դեպի հարավ: Ո՞ւր գնաց, որտեղ կորավ... Ի՞նչ եղար աղջի՜ի՜...

Աստված տվեց:

Մերժեցի՞ր:

Չգնահատեցի՞ր:

Դե գնա պատժվի՞ր: Ծակ ու փուչ օղակը օղակին հագավ, երկարեց-երկարեց դառավ ապրած կյանք, մի աշխարհ կարոտով...

Հիմա խազը քաշի՞ր, հանրագումարի բեր:

...Ուհաննես, էս լույսը չբացված էստեղ ես: Բարի առավոտ: Հը՞, դեռ շնչո՞ւմ ա: Էս մարդն երկաթից ա սարքած: Լեզուն չբացվեց... Մտքինն ի՞նչ ա՝ էլի ապրի՞: Մոսո, Մովսես, այ տա, հերիք ա, հերիք, տանջվում ես, մեղք ես, գնա:

Վարշամն ա, Ֆրանկանց Վարշամն ա, մի քանի տարի էլ սա կլինի ինձանից ջահել:

- Ուհաննե՛ս, գիշերակաց ես եղե՞լ:

- Չէ, չի թողնում, աչքունքով հասկացնում ա, որ գնամ: Սիրտս մղկտալով թողնում եմ գնում: Դու ո՞նց ես, Վարշամ:

- Ես լավ եմ, ինձ ինչ ա եղել որ, շատ լավ եմ: Ականջդ դեսը բեր. դեռ առնում եմ, հե՛, հե՛, հե՛...

- Ինչն ես առնում:

- Ա՛յ շաշ, ասում եմ՝ կնկա հոտն առնում եմ դեռ, հե՛, հե՛, հե՛... Դե գնացեք: Լսեցի՞ր, Մոսո, բա, դե գնա, դե կեր...

- Վարշամ, ամոթ չե՞ս անում:

- Չէ, դու սրան լավ չես ճանաչում, սա հենց գիտեր աշխարհն իրանն ա, տերն ինքն ա, տիրական ա: Վերվերից էր բրթբրթացնում...

Ա՛յ Ֆրանկանց Վարշամ, էդ քո միջի անմարդկությունը քեզ ինչի՞ չկերավ, վերջանայիր: Էլ ետ լեղի փսլինքդ ցալքուն ես անում...

Արի, Ուհաննես ջան, մոտ արի:

- Ուհաննես, նշան ա անում, բա՞ն ա ուզում ասի:

- Հա, ասում ա՝ արի·ինձ շուռ տուր մյուս կողքի:

- Տե՛ս, է, շան պես հասկանում ես, հե՛, հե՛, հե՛...

Օխա՛յ... Առանց քեզ ինչ էի անելու, Ուհաննես: Բարձս էլ ուղղի, գլխատեղս բարձրացրու:

- Ո՞նց ես իմանում, թե ինչ ա ուզածը:

- Վարշամ, ինչ ծնվել եմ, սրա ընկերն եմ, լեզուն իմանում եմ:

- Սրա լեզուն իմանա՞լ կլինի: Հա՜ա՜, մութ մարդ էր, փակ, վերամբարձ, հոգին խորը... Սրա մերը չմեռնի... Բայց սրան մի տանջող բան ուներ, չհասկացա:

- Ես էլ:

- Ինչն էր:

- Ո՞վ գիտի:

- Բա չիմանա՞նք: Այ տա, գնո՛ւմ ա է:

- Ինչի՞դ ա պետք:

- Հա, էդ էլ ես դրուստ ասում: Համա ինչ ուզում ես ասա, սա մի հանցանք ուներ: Մնաց անպատիժ: Ափսոս... Հլա ոնց ա ինձ նայում... Քմծիծաղ ա տալիս: Մովսես Առաքելյան, քեզանից էլ վախեցող չկա, հանգել ես, հանգել: Մեղքերդ քավի, հենց իմանանք քո տերտերն եմ, մեղքերդ խոստովանի:

- Վարշամ, վերջացրու, մարդը ծանր հիվանդ ա:

- Որ ծանր ա, բա ինչի՞ չի մեռնում: Անմա՞հ ա: Ուհաննես, բա դու

սրա ախպեր ընկերն ես, սա մի մեծ մեղք ուներ գործած, տանջվում էր, ինչի չգիտես:

- Դե չգիտեմ, էլի:

- Թաքցնում ես: Հա՜մ, արա սովետն էլ սրա հախից չեկավ, է: Անկոտրում մարդ էր:

- Ծռվող չէր, դրուստ ա:

- Շատ խելոքի տեղ էր դրել իրան:

Վարշամ, ես քո անաբուռ հերն եմ անիծել, սպասի մեռնեմ, նոր բամբասի:

- Թարս մարդ էր, անհաշտ, կռվարար:

- Էդ մեկը հա, Վարշամ, էդ մեկը ճիշտ ես: Մի օր, վաղուցվա բան եմ ասում, կոլխոզի բեռնատարը դաշտից եկավ, բեռը շաղ տալով անցավ, ցեխերի մեջ, այ տա: Անձրևոտ էլ օր ա, բեռն էլ կարտոլ ա: Մոսո, հիշո՞ւմ ես: Հլա ոնց ա ժպտում, վայ ես քո չարը տանեմ, Մոսո ջան: Հա, կարտոլ եմ ասել, ըհը, ամեն մինն էս բռունցքիս չափ, էնքան էլ առողջ: Տարին լավն էր: Հա, սա բլուզը փեշ արավ, էս երգեն բոյը ամեն մի հատի համար ծալեց: Ցեխերն ա ընկել: Երկու ռուս աֆիցեր կանգնեցին՝ մտիկ են անում, մինը մնին ասում ա.

- Կրեպոկ ստարիկ, սմոտրի, զա կաժդոյ կարտոֆելինոյ բեժիտ:

- Դա՛մ ա,- վրա ա բերում ընկերը,- ու տակոգո զիմոյ սնեգա նե վիպրոսիշ: Չաստնիկ, սրազու վիդնո, կուլաչյե ատրոդյե:

- Վո՛ւտ, վո՛ւտ: Իզ նե դոբիտիխ վիդնո: Տի չտո,- ասում ա,- տի չտո, ստարիկ, գոսուդարստվեննոյե դոբրո վորոյեշ...

- Էդ ա է, էդ ա է, Ուհաննես, արա սա մի օր էս պետության համար աշխատե՞լ ա: Հետո՞:

- Հլա կա՛ց, Վարշամ: Էս ահը կտրածը շուռ եկավ ու թե՝ իդի կյեբենի մատերի: Ասի՝ Մոսո, լեզուդ քեզ քաշի, շառ ա, շառ: Հրեն, ասի, ձեռը տանում ա ատրճանակին, քո իմացածը չի, ճակատիդ կշարի...

- Հանե՞ց ատրճանակը:

- Հանեց, Վարշամ, վախիցս լեզուս կուլ գնաց: Դե, պատերազմ տեսած, գազազած զինվորական:

- Հետո՞:

- Էլ ինչ՝ հետո: Աղաչանք եմ անում, արա, ասում եմ, քեզ սազո՞ւմ

ա, քեզ պետք ա մի քանի կարտոփի համար կռանում ես... Թարս-թարս խեթեց ինձ. սրա աչքերը, որ սևանում են, գլուխդ առ ու փախի, կռացած տեղը մի քարի կտոր վեր կալավ ու էս ոտիս կոճին, վնգստոցս հանեց: Հիմի էս աֆիցերները կարտոփը մոռացած կպան թե՝ պոչեմու չելավեկը բյոշ: Այ ձեր հոգուն մատաղ, սրանց արանքն եմ ընկել, ձեր բանը չի, իմ ընկերն ա, դուք մի խառնվեք մեր գործերին...

- Ուհաննես, հլա մի տես է, ծիծաղում ա:

- Հա, բա ինչ կանի, Վարշամ ջան, լեզուն ա կապ ընկել, թե չէ... Քանի տարի ա անցել, ոտքս էլի խոնավ օրերին մզմզում ա: Հետո պարզվեց, որ ոսկորս ճաքացրել էր:

- Ծիծաղում ա, Ուհաննես... Չէ, սա մեռնողը չէ:

- Մեռնողն ա:

- Չէ, չէ...

- Հա՛, հա՛... Թիհ, թիհ, թիհ...- Լաց եղավ Ուհաննեսն ու արցունքները մազոտ այտերի վրա սվաղեց:

- Հիմի էդ ինչի՞ ես լաց լինում:

- Տանջվում ա խեղճը:

- Խեղճը... Պատմի՛, ատրճանակն ի՞նչ եղավ:

- Աֆիցերների ոտներն ընկա, ասի՝ սրա կտուրի մի տախտակը պակաս ա, գործ չունեք: Մինը դրանցից տարիքով էր, ասավ.

- Դա բրոս տի, իզ զա էտոյ բեշեննոյ սաբակի նեպրիյատնոստի բուդուդ:

- Է է, պիտի թողնեիր մի սրա էն, էն, էն... Մի սրան լավ խեղճացնեին, է:

- Նրանք հանդարտվեցին, հիմի սա չի հանգստանում: Նախշում ա, հո չի նախշում. ես ձեր անսեփական մերը, ես ձեր ծափ տվող նանը, ամոթը շաղ տալն ու փչացնելը չի ապրանքը, թե՞ հավաքելն ա... Ես ձեր մարշիրովկեն, ես ձեր թմբուկը: Վոտ տակ, ասում ա, սկորո գոսուդարստվո ռաստերյայետե... Վրա ա տվել սրանց, ինքն էլ չի հասկանում՝ ինչ ա խոսում: Սեյչաս, ասում ա, տվոյ նագան վսունու տեբե վ ժոպու: Դավայ տվոյ պլանշետ... Վզովը կախ եմ ընկել ցավս մոռացած, Վարշամ ջան, աղաչանք, պաղատանք՝ Մոսո, Մոսո, իմ ախպեր, իմ խաթեր, արա, կտան կսպանեն երկուսիս էլ, երեխու տեր ենք, գոնե

ինձ խղճա: Ո՞ւմ ես ասում... Դավայ, ասում ա, պլանշետ, նասիպլյու կարտոշկու, գոլոդնոյու ժենու նակորմի, դուռակ: Զաչեմ վոյեվալ, դլյա կոգո կրով պրոլիվալ... Օձի պես էնքան ֆշշացրեց, վրա քշեց...

- Պահ, քու տիրոջ... Վերջը:

- Ասին՝ նա սամոմ դելե չոկնուտի: Պոչները քաշեցին, գնացին:

- Հլա դու տես, է...

- Վերջում էլ շուռ եկավ ինձ. Մոսո, միտդ ա. «Քո քրտինքն եմ ցեխի միջից հավաքում, կոլխոզնիկ անասուն, ես՝ Առաքելյան Մովսեսս, բա դու արժանի՞ ես, նոքարի ծնունդ, նոքար, դեպուտատ ես դառել, դարմանի վրա քնած, մեծացած»: Վարշամ ջան, էլ աշխարհքի վիրավորանքը, ինչ որ չէիք տեսել պատին, տեսաք ձեր ճակտին, ինձ ա ասում, քո հերն ասում ա սոված ա մտել քո մոր ծոցը, ուրիշի թերմացք ուտող, հիմի աղա՞ եք դառել: Վարշամ ջան, մեր բախտից անձրևն ուժեղացավ, մարդ չհավաքվեց, չլսեց:

- Ա՛յ տղա, գնայիր հայտնեիր:

- Էդ խո՞սք ա, որ ասում ես, Վարշամ: Երկուսիս էլ կկոխեին ծակը, Ստալինի ժամանակներն էին, է:

- Ափսոս... Հետո՞:

- Մեկ էլ անսպասելի ինձ քաշեց վեր, երեսն՝ երեսիս, խելագար աչքերն՝ աչքերիս ու թե՝ քո մայրիկ Հեղուշը ո՞նց ա... Շշկլվեցի...

- Էդ ի՞նչ հանելուկ էր, այ տա:

- Եսիմ: Հանելուկ ասիր ու պրծա՞ր: Հրես մեռնում ա, էլ նոր ի՞նչ կիմանաս... Մարդ չէր, սատանա էր, թիհ, թիհ, թիհ...

- Լավ մարդ չէր, Ուհաննես, բոլորովին լաց մի լինի: Մեկ-մեկ էնպես կկոշտեր, որ կմնայիր սառած: Անտեղի տեղը:

- Ի՞նչ իմանաս...

- Վերջը կարտոլն ի՞նչ արեց:

- Էլ ետ հավաքեց, տարավ: Իր տուն տարավ...

Այ քար չընկնի ձեր գլխին, հա. թաղեցին պրծան: Էն շաշն էլ մի գլուխ լաց ա լինում՝ թիհ, թիհ, թիհ... Շնորհքին լաց լինել էլ չգիտի, տնաշենը...

- Հիմի մտիկ, թե ինչ օրի ա ընկել, թիհ, թիհ, թիհ... Խեղճացել ես, Մոսո ջան, ախպեր... Տուն եմ գնում, Վարշամ, տեսնեմ երեխեքս

սիպտակ գիլաս են ուտում, թիհ, թիհ... Իմ սարի պես ընկեր Մոսոն, բա՛, բա՛... Աղջի, կնկանս եմ ասում՝ այ տնաքանդ, նեղն ենք, էս ի՞նչ ծախսեր ես անում: Թե՝ բանիդ կաց, եղբայր Մովսեսն ա ուղարկել: Մոսո՞ն, հարցնում եմ: Հեչ, ձեռը թափ է տալիս, Բոլնիս-Խաչենից են բերել, շատ էին բերել, թող քո երեխեքն էլ նուբար անեն, թիհ, թիհ... էդպես ամեն ինչ... Նեղ օրի ընկեր ա...

Ուհաննես, Ուհաննես, էդ ինչի՞դ ա պետք, որ հիշում ես:

- Ասում ես, էն կարտոլը վերջում տարամ՝ փեշով:

- Հա:

- Բա դու ասում ես՝ գիլաս: Չէ, ինձ որ հարցնես՝ ձեռը պինդ մարդ էր:

- Դե, հաշվող մարդ էր, կարգ ու կանոն սիրող, խնայող: Ասում էր՝ խնայողությունը շնորհք է:

- Է է, ասա՝ ժլատ, նախանձ մարդ էր: Սրա տան առաջի վարդանոցը տեսնո՞ւմ ես:

- Պահ, հիացմունք ա...

- Որտեղից էլ ճարում ա տեսակ-տեսակ էդ վարդերը: Հա, ուրեմն...

- Խոսքդ շաքարով կտրեմ, Վարշամ, հի՛, հի՛, հի՛... Այ տա, դրա վրա էլ ա խփնված: Դու գիտե՞ս, որ դեռ ոչ մի մարդ էդ վարդանոցը մտած չի: Մի օր միամիտ-միամիտ ոտ դրի. էնպես գոռաց, որ հորթատեցի: Հետո էլ թե՝ կներես, ուրիշ հաշիվ կա:

- Մալախոլնի անտեր... Հա, մի ձևի սպիտակ վարդ ունի, ասի՝ Մովսես, մի քանի շիվ տուր տանեմ տնկեմ, ես էլ ունենամ: Գարունքը կգաս, ասում ա, կտամ: Եկա: Թե՝ չէ, սխալվել եմ, սա աշնանն են տնկում: Աշնանը եկա, թե՝ գարունն արի: Է, է, այ մարդ, ծաղիկի եղածն ի՞նչ ա, որ խնայում ես...

- Մի գաղտնիք էլ էս վարդանոցում կա: Մի կիրակի օր եկա, տեսնեմ էդ ծաղկից մինը ձեռին հոտոտում ա, էնպես ա հոտ քաշում, որ ասես ուզում ա մեռնելուց պրծնի... Մի խոսքով, հեքիաթի պատմություն: Հայացքն էլ պղտոր, տանջված, էն ա՝ հիվանդի աչքեր... Երկար մտիկ արավ ինձ ու մեկ էլ թե՝ առ էս վարդը, տար Նաստյային տուր, կասես՝ Մոիսեյ պրիսլալ: Բան հասկացա՞ր, Վարշամ, իմ պատմածից: Ես որ շվարեցի:

- Ա՛յ տա, հլա կաց: Էն ինչ ա, լաց ա լինում:

- Չէ, հիվանդությունից աչքերն էդպես մեկ-մեկ թրջվում են: Էսա կսրբեմ: Մոսո ջան, թաշկինակդ ուր ա... Ուրեմն շվարեցի: Նաստյան ով ա, Մոսո՛: Քո բանը չի, ասում ա, ինչ որ ասում եմ՝ արա:

- Էդ Նաստյան ով ա, ճանաչում ես:

- Չէ հա, ինչ Նաստյա, ինչ բան:

- Փչացած շանն ես տեսնում:

- Եսիմ, գլուխ չհանեցի:

- Աչքերը բացեց, Ուհաննես:

- Հա, Մոսո ջան, ոնց ես: Նայում ա... Գիտես ինչ ա ուզում ասի: Ուհաննես, ասում ա՝ չանեդ քիչ կախ գցի, շատ գիտես՝ քիչ խոսա: Ձեռին որ ճար լինի՝ կտփի ինձ, հի՛, հի՛, հի՛... Անապատի ավազ, ծմեռվա բուքուբորան, կատաղած գամփռ, ասելու եմ, պատմելու եմ, դե գնա: Քու դատավորն եմ, քու կրտսերն եմ, ես եմ թաղելու քեզ: Փոսդ էնպես սիրուն կտրեմ, որ քեֆդ գա: Հի՛, հի՛, հի՛, դե խոսա, դե վեր կաց մտրակն առ ձեռդ, թիհ, թիհ, երանի, վախ երանի էն օրերին... Դու չգիտես, Վարշամ, սա ինձ շատ ա դաղել: Հը՞, Մոսո, հերիք չի՞ դու ինձ խեղդած պահես, հիմի ոնց ես, որ բարձը դնեմ պնչիդ շունչդ կտրացնեմ: Մուռս հանեմ, գոռոզ շուն: Բա ուր են տղերքդ, գան ձեռս բռնեն, չթողնեն: Էս ինչ սերունդ ա, տեր Աստված: Առաքլանց ցեղ, Առաքլանց տոհմ... Դե գնա՛, գնա՛... Քո հարազ... քո հարազատն էլի ես մնացի, կողքիդ եմ, թիհ, թիհ, թիհ... Մոսո ջան, ընկեր ջան...

- Հանդարտվի՛, ա՛յ մարդ, թող մեռնի նոր լացուկոծ արա: Չե՞ս տեսնում՝ բարկացած ա նայում քեզ:

- Թող բարկանա, պետքս չի... Բա որ ես որբ եմ մնում:

- Դե, հիմի էս մարդն ինչքան ապրի, որ գոհանաք:

- Մի օր գործով գնացել էինք Ալավերդի, ջահել էինք, հե՛յ գիտի-, հա... Բարեկամ ունեի էնտեղ, մենձ էլ պաշտոնյա՝ մի խոշոր հիմնարկի գլխավոր հաշվապահ: Դրանց տանը մնացինք գիշերակաց: Էն ա առավոտը վեր կացանք, ջուր ածին մեր ձեռին լվացվեցինք, կարգով-հարգով սրբիչներ մատուցեցին, նստեցինք հացի: Հիմի նստել ենք, սա ինձ աչքերով ուտում ա: Ոչ էն ա հարցնես, ոչ էն ա ինչ անես: Դե լավ, մտածեցի, մի բան էլա չեմ արել, զահլես մի տանի:

Ճամփա ընկանք: Խռով ա, բառ չի փոխանակում: Եկանք հասանք տեղ. գոհ ես քեզանից, հարցրի, սաղ ճամփեն մռութդ նավթոտել էիր: Ո՛չ հարցնեի:

Հեչ, ասում ա, արի մտիր մեր գոմը, բան ունեմ ասելու քեզ: Գնացի, միամիտ-միամիտ: Ո՛չ գնայի: Դուռը ներսից փակեց, մտրակն առավ ձեռը, տուր թե կտաս: Վերհատեց ու վերհատեց... Թուհ, թուհ... Մոսո, Մոսո, այ ախպեր... Ես քեզ ինչ եմ արել:

- Բա որ ասում եմ՝ վայրենի ա:

- Հավատա, Վարշամ, ամբողջ գիշեր չքնեցի:

- Ցավից:

- Սրտիս ցավից, վիրավորանքից:

- Գոնե մի քանի հատ էլ դու չհասցրիր:

- Սրա դրբի տակ ընկած կամ:

- Հըմ, հըմ...

- Ընկած կլինեեես... Բա էլ ինչ ես ավելորդ տեղը հարց տալի: Առավոտ ծեգին եկա մոտը: Տո ոչ ու փուչ, ասի, դու քանի գլխանի ես, որ ինձ էդպես թակում ես անտեղի տեղը: Ես աշխատավոր, կոլխոզնիկ մարդ եմ, էս երկիրն, ասի, իմ ուսերի վրա եմ պահում, պարտիական մարդ եմ, կգնամ կբողոքեմ, ականջներդ կկտրեն, սիբիրներում կփտացնեն, ես աշխատավոր... Ես սովետական...

- Բողոքեցիր:

- Ռադդ քաշի, ասավ, քոսոտ էծ... Քու ուսերն ինչ են, որ երկիր էլ պահես:

- Ամբարտավան, գոռոզ անտեր, ասի, հերիք եղավ, բոլ եղավ, կուլակի ցնկնած...

- Ինչ տեղին ես ասել, Ուհաննես ջան, էտ ա, է:

- Ինչ պատասխանի, որ լավ լինի:

- Ինչ:

- Ասում ա՝ քո պապն ու հերն էլ, մանավանդ մերդ էլ էին ուզում, որ մենք չլինենք, բայց դե մենք ձեր ատամի բանը չենք:

- Իմ պապն ու հերն ինչ գործ ունեն, ասի, եղանը հրես կառնեմ կկոխեմ փորդ, դաշնակցական շուն, ասի: Համ ասում եմ, համ էլ վախենում եմ:

- Էդ ինչի՞ որ:

- Եղանն իրա ձեռին էր:

- Հա, բայց դաշնակ ա, չէ՞, գնայիր հայտնեիր, սրանք ցեղով են դաշնակ: Ափսոս, ափսոս Ստալինը, թե նրա ժամանակները կլինեին... Լավ, հետո՞:

- Հետո շուռ եկավ, թե՝ մայրիկդ էլ ա, չէ՞, կուսակցական: Տո, հա, ասի, ցեղով ենք կոմունիստ, աչքդ էլ հանել ենք, հանելու ենք: Մորս հասցեին բան չասես, թե չէ արյուն կթափեմ:

- Դե գնա, ասավ, կուսակցական մորդ բարև տուր հատուկ ինձանից ու էլ չերևաս աչքիս: Վարշամ ջան, մարդ չէ սա... Մայրիկս մեռավ, օղորմածիկը, էս անաստվածը թաղմանը չեկավ: Օղի էր ուղարկել մի արկղ, հետն էլ հոգեհացի բան-ման, ինքը չեկավ: Էքսի օրն եկա. այ անշնորհք, ասում եմ, մարդիկ հարցրին՝ էս ախպեր-ընկերդ ինչի՞ չի ներկա:

Աչքերը զարմացած չռեց վրաս.

- Հեղուշ մայրիկդ մահացավ: Աստված մեղքերին թողություն տա... Հանելո՛ւկ...

- Վերջն էն ծեծն ինչի՞ կերար, Ուհաննես:

- Ի՛հի՛հ... Հեչ, մի շաշ բան, որ ասեմ՝ կծիծաղես: Էն էլ ասեմ, որ էն ծեծից հետո երդվեցի, որ վերջ, էլ ոչ մի ընկերություն սրա հետ:

- Բա՛ ինչի՞ ներեցիր:

- Ինքն ինձ ներեց: Ո՞նց ասեմ, երկու շաբաթ չէր անցել, երեխուն ուղարկել էր հետևիցս: Մտքումս տվի առա, ասի՝ գնամ, թե՞ չգնամ, վերջը չդիմացա, եկա: Քուչի շուն, ասում ա, էդ որտե՞ղ ես զվռնում: Ինձ ա հարցնում: Քեզ նման պարապ չեմ, գործի մարդ եմ, ականջս քորելու ժամանակ չունեմ, հրեն խոտհարքը սկսվել ա...

Սա հենց գիտի բոլորն իր նման անբան են: Ամեն ինձ տեսնելուց ասում էր՝ էլի գլխարկ ես կարո՞ւմ: Հա, պատասխանում եմ, գդակ եմ կարում ժողովրդի համար, քեզ նման ձրիակերություն չեմ անում: Բա գդակս ո՞ւր է, գող փիսո... Սա ինձ ուրիշ կերպ ա դաղել, Ուհաննես, դու չգիտես, սիրտս դաղվում ա...

- Ասիր՝ անբա՞ն... Վարշամ, սրա հետ խոտ հնձած կա՞ս, սրա սարքած սելը տեսած կա՞ս: Վրաստանի մալականներից սկսած հերթ

էին կանգնում, որ առնեն: Ակներից սկսած ինքն էր սարքում, ոսկի ձեռքեր ունի Մոսոն:

- Էդ որտեղի՞ց էր սովորել, էս...

- Սա ամեն բան գիտի, հազարափեշակ մարդ ա: Տե՛ս, ոնց ա ծիծաղում: Դուրդ գալի՞ս ա, որ գովում եմ քեզ, Մոսո: Բա...

- Փառամոլի մեկը...

- Հա, տարավ բերեց թե՝ ես ո՞ւմ հետ եմ գինի խմելու, դու խիղճ չունե՞ս: Ասի՝ քո գործն ա, ես խմելը թարգել եմ, դե գնա:

Այ տա, դու խելքի ծով ես եղել, ես չեմ իմացել: Դե նստի, տես ինչ սեղան եմ գցել քո պատվին: Պատիվ ունե՞ս, չէ՞:

Էն ինչի՞ չունեմ, քեզնից ինչո՞վ եմ պակաս: Գինին էլ ես եմ առել, ասում ա, Խաչենի կարմիրը, գիտեմ, որ սիրում ես:

Քո երեխե՞ն եմ, ասի, ձեռս կակա ես տալիս խաբե՞ս... Մինչև չասես էն օյինն ինչի բերիր գլխիս:

Կասեմ, ասելու եմ, հանգիստ կաց, նստի: Քեզ համար խորոված եմ արել, քո պատվին կաթնակեր մի խոճկոր եմ ծակել, որ հետս հաշտվես: Վարշամ, սրա սարքած խորոված՝ փա՛հ, փա՛հ... Կարճ ասեմ՝ ուտում-խմում ենք: Մտիկ ա անում բերանիս՝ ծիծաղում, մտիկ ա անում՝ գլուխը տմբտմբացնում...

Հը՞, մալախոլնի, խոսա: Ես ու դու, ասում ա, գնացել ենք հյուր: Էդ օրը նկատեցի, թե իմ ընկերն ինչքան ա անտաշ: Սիրտս մղկտաց ու ինձ շատ մեղավոր զգացի, ախր դաստիարակությամբդ չեմ զբաղվել:

Զարմացնես քեզ, հա... Էդ ի՞նչ եմ արել, հարցնում եմ:

Առաջինն, ասում ա, հաց ուտելիս բերանդ փակ ծամի, երկրորդը՝ հյուր ես, ուշադրության կենտրոն ես, պատառդ պուճուր պոկի դիր բերանդ, էդ ո՞ւր ես մատներով բրդում ներս, սիլոսի հո՞ր ա: Երրորդը, ասում ա, լվացվեցիր, մաքուր սրբիչը տվին ձեռդ, կոխեցիր մրոտ ականջներդ հերիք չի, վերջում էլ վզիդ մի շաբաթվա կեղտը էդ սիպտակ սրբիչով քերեցիր, սևացրիր: Պատիվդ գցեցի՞ր, թե չէ:

Անմեղ-անմեղ լվացվել ենք, սրբվել ենք, էդտեղ ի՞նչ կա որ, համ էլ իմ բարեկամներն են, քե՞զ ինչ:

Ինձ հեչ, պատասխանում ա, բայց դու մարդ ես, մարդն էլ ամենափնթի կենդանին ա, կեղտոտ, որ ուզում ես իմանաս: Շունը,

կատուն, հավը, որ չլողանան՝ ոչինչ, շուն ու կատու կմնան իրանց հոտերով: Մարդս, որ տասը օր չլողանա, չմաքրվի, շան հոտ կգա վրայից, կնեխի, մեռելի հոտ կգա... Եգոր պապս իր պառավին ստիպում էր, որ շաբաթը երկու անգամ գոնե իրեն լողացնի: Ասում էր՝ համ քավթառ լինեմ, համ էլ կեղտոտ, ջահելները կզզվեն ինձանից: Ամառներն ամեն Աստծո օր իջնում էր ձորը մեր գետի մաքուր ջրերով լողանում: Քո կեղտը քո տանը մաքրի, գլխիդ մատաղ, Ուհաննես ջան, երեխեքիդ էլ սովորեցրու, ուրիշի աչքից սեփական փնթիությունդ թաքցրու... Էս երկիրը ոնց եք կառուցելու քրտնքոտ ոտներով: Պարտիական ես, մի քիչ էլ կուլտուրական դարձիր...

Ասի՝ այ Մոսո, էս հո մի մարքսիզմի դաս էր, էս խրատը... Էս խրատն, ասավ, մարքսիզմի չէ, քրիստոնյայի խրատ ա, մարդ մնալու: Մարմնով մաքուր մարդը կեղտոտ հանցանք դժվար կանի: Ո՞րն ա գլխավորը, հարցնում ա Մովսեսս, հոգին, թե՞ մարմինը:

Մարմինը, պատասխանում եմ, մարքսիզմն էդպես ա ասում:

Չէ, հավասար, հավասար, Ուհաննես ջան, ինչ ա մարմինն առանց հոգու կամ հոգին առանց մարմնի, փուչ, իմաստազուրկ բան: Մոսո, Մովսես ջան, քո փիլիսոփա արևին մեռնեմ, մի վեր կաց, էդ քո սիրուն ձենովդ մի բլբլա, է: Բա դու մեռնելու տղա՞ ես: Թի՛հ, թի՛հ, թի՛հ...

Հա, շարունակեմ: Հիմի, ասավ, արի դենը գնանք, էս երկու հարյուր տարի ավել մալականների կողքին ապրում ենք, սրանց ամեն մինը իրա դռանը բաղնիք ունի սարքած, շատ պարզ ու շատ հարմար: Շաբաթն եկավ՝ մեծ ու փոքր մաքրացավ են կպնում, ներս ու դուրս փայլացնում են, իրիկունը ամբողջ ընտանիքով լողանում, մաքրվում: Էս ինչի՞ չենք ընդօրինակում: Կիրակի օրն էլ սիրուն հագնվում են, նստոտում իրանց տների առաջ՝ երգ ու նվագ, ծիծաղ ու խինդ: Կիրակի օրը, որ սպանես՝ չեն աշխատի, որովհետև Աստված աշխարհը ստեղծելիս կիրակի օրը հանգստացել ա: Բա մենք քրիստոնյա չենք, ինչո՞ւ չենք հետևում Աստծո օրինակին: Խառն ու փնթի ենք ապրում, մեր հոգին էլ փնթիանում ա, կարգ ու ավանդույթ չունենք, եկեղեցուց էլ կտրվեցինք...

- Ուհաննես, կոմունիստ մարդ ես, ինչ եկեղեցի...

- Երանի էն օրերը, Մոսո ջան, ջահել էինք:

- Էդպես էլ ծեծը կուլ տվիր, ախմախ: Ես չէի ների:
- Ղալաթ կանեիր:
- Քիթ-մռութին էնպես կտայի, որ...
- Գլուխդ պատովը կտայիր, Վարշամ տղա:
- Էդ ինձ ես ասում:
- Որովհետև Մոսոն սուրբ ա:
- Հիհի...
- Մոսոյին ծեծել չի կարելի:
- Ուհաննես, էդ ինչեր ես դուրս տալի, խելքդ գլուխդ հավաքի: Սրանք դաժան են, անսիրտ, անօրեն: Սրա հրոխպոր տղեն չէր մարդասպանը:
- Շատ էլ ճիշտ էր, դու չգիտես:
- Որ ասին մածունը սև ա՝ սև ա: Հերս բատրակ էր սրանց մոտ, ասում էր Լոռին իրանց բռի մեջ էին պահում ցարի ժամանակ, ամեն ինչի տերն իրանք էին, դատավոր-դատախազ էին... Սովետը սրանց հախից լավ եկավ, կուլակ տզրուկներ... Հա միտք եմ անում, թե ոնց եղավ, որ սրանց չաքսորեցին, փողեր բանացրին, ինչ արին: Հերս ասում էր՝ Առաքլանց ցեղը պիտի ջնջես աշխարհի երեսից, սրանց տանն ինչ որ շարժվում ա, շնչում ա, պիտի տրորես, սրանց տան մրջյունն էլ պիտի կոխ տաս...
- Վարշամ, էդ ինչիդ վրա ես խորոզացել, էդ ում մասին ես էդպես հաչում: Վզիցդ կբռնեմ, դուրս կշպրտեմ: Էն ա Մովսեսն աչքով-ունքով հասկացնում ա, որ էդպես էլ անեմ: Ախպերս, որ մեռնի, չգաս թաղմանը: Դե, փասափուսեդ հավաքի...
- Մի աննորմալն էլ դու ես: Կաց, Ալբերթիս ասեմ...
- Քո Ալբերթի նանն էլ... Գնա, թե չէ կտամ աչքդ կհանեմ:
- Գնամ: Ձեռնափայտս ուր ա, տուր:
- Ձեռնափայտդ դու վերցրու, թե չէ, որ իմ ձեռն ընկավ, գլխիդ կկոտրեմ:
- Գնում եմ, բայց ասեմ ինչի էի եկել: Սրտիս դարդ էր՝ մտածեցի կմեռնի, մուռս կմնա անկատար: Մովսես, դու ինձ շատ ես նսեմացրել, հոգիս դաղել ես, ձեռ ես առել: Էս վերջերս էլ թունդ վիրավորեցիր: Հիշում ես, Ալբերթս ծնունդիս մի կարակուլի գլխարկ էր նվիրել ինձ:

Հանեցիր գլխիցս, զննեցիր ու նետեցիր ձյան մեջ, ասիր՝ քեզ չի սազում, բոյդ կարճ ա... Հը, հը, հը... Ինչ անպատվություն տղամարդու համար: Հիմի եկել եմ քեզ ասեմ, որ սոված փորով մեծացած իմ Ալբերթը նշանակվել ա Ալավերդու առաջին քարտուղար, լսեցիր: Մեծ մարդ ա իմ տղեն, երկրի տեր ու տիրական: Քունոնք ինչ եղան, քո Կարապետը մի քոսոտ աննշան բժիշկ: Կերամ, իմացամ, կմարսեմ: Դե գնա՛:

...Գիտեմ, Ուհաննես ջան, դու էլ ինձ նման կատաղած շուն ես դառել: Ես չխաբվելուց, դու՝ խաբվելուց: Երկիրն ուրեմն հիմի էլ Ալբերթների ձեռն ընկավ... Տեսամ, որ սրանց ամեն ասած սուտ դուրս եկավ, համոզվեցիր: Բայց այսուհետև ոնց ես ապրելու՝ ոչ կոմունիստ ես, ոչ քրիստոնյա... Շան կյանք:

Վարշամին լավ արիր, որ վռնդեցիր: Բա ինչ անեինք: Մի շատ պուճուր մարդ ա՝ ների: Դու չտանջվես, որ մեռնեմ, հոգիդ խելոք ա, քեզ կասի ոնց պահես քեզ: Ամեն ինչի համար էլ ինձ ների, քեզ միշտ սիրել եմ, սիրտդ անմեղ ա, մաքուր, երեխա էլ մնացիր:

Չէ, Ուհաննես ջան, բան չեմ ուզում, իմ ուտելը պրծավ, չեմ կարող: Նստիր դիմացս, հանգիստ ծխի քեզ համար, ես աչքերս փակեմ մի քիչ: Երանի քեզ, որ ծխում ես: Տուր մի հատ էլ ես քաշեմ: Օխմ՛յ... Գիտես, էլի, հատուկ ծխողներից չեմ, բայց սիրտս ուզեց: Հե՛, հե՛, հե՛... Ա՛յ տա, էդ մի ղուլաբից գլուխս պտտվեց, հարբեցի... Քաղցր, քաղցր... Կյանքը քաղցր:

...Էդպես էլ ինձ համար գաղտնիք մնաց, թե լուսահոգի մորս սա ինչի՞ չէր սիրում... Մենք սրանց հետ հարևան ենք եղել, էդ գիտեմ, հետո տեղափոխվել ենք վերին թաղը: Օղորմածիկ մորս շատ հարցուփորձ արի՝ ձեռը թափ էր տալի, խոսքը կտուրն էր գցում: Մի անգամ, որ շատ զոռեցի, ասավ՝ Առաքլանց հոտը կտրվի, ինչքան դրանցից հեռու՝ էնքան լավ, ամբարիշտ են, կռվարար ժողովուրդ են, ինչը, որ իրանց քթովը չի, չեն հանդուրժում: Անհաշտ են, խաղաղ չեն: Որ չտեղափոխվեինք, ավելացրեց վերջում, որ չգայինք, ասում ա, մեր տունը կառ էին տալու... Եսիմ:

- Մոսո, մերս քեզ ինչ էր արել, որ չէիր սիրում: Քնեց... Լեզուն կապ ընկած չլիներ՝ կասեր: Կասե՞ր որ...

...Ինչի՞ իմանաս, Ուհաննես, քո մայրիկը քեզ համար սուրբ ա եղել, թող էդպես էլ կենա, ինչի՞դ ա պետք:

...Իմ չորեքթաթ ժամանակ, ինձ աչքաթող են արել, հասել եմ քարափի պռունկին, ձեռս տարել կարմիր մասուրին ու... Ու շորս ընկել ա մասրենու թփին: Կախվել եմ անդունդի վրա: Եգոր պապս ա նկատել, որ չկամ, դես ու դեն ա վազել, դես ու դեն, ու գտել ա ինձ: Կատվի պես անձեն մոտեցել ա, ճանկել, դուս ա քաշել վերջի վայրկյանին...

Ասում էր՝ ձագս, գառնուկս, օդում, համարյա օդում եմ բռնել, էն ա գնացել էիր: Սիրտս ճաքացրիր, էն օրն ընկա, որ... Հիմի համ փրկել եմ քեզ, լաց եմ լինում ուրախությունից, համ էլ անհանգիստ եմ մի տեսակ: Զգում եմ, որ չարը մոտիկ ա, կողքիս: Քեզ դոշիս կպցրած՝ աջ ու ձախ խլշկոտում եմ: Աչքս բռնեց:

Տեսել ա քո մեր Հեղուշին, պատի ձեր կռանը սալորենու ճյուղերի մեջ մարաղ մտած: Քար դառած սպասելիս ա եղել տեսնի, թե ես ոնց եմ գլորվում անդունդը: Աչքերը սառած օձի պես սպասել ա:

Պապս հայացքը խրել ա դրա պղտոր աչքերի մեջ ու ինձ գրկած մոտեցել, ասել ա.

- Բոշանց աղջիկ, քու հերը աղջիկ չի մեծացրել, այլ քած, քա՛ծ... շան քած:

Հետո մի քանի գիշեր քունը չի տարել: Գիշերով էլ տեղերից վեր ա կացել, ձեն տվել հորդ.

- Ես քո հարևանությունը չեմ ուզում:

- Ինչի՞, ես քեզ ի՞նչ եմ արել:

- Չեմ ուզում, մինչև աշունք քեզ ժամանակ, տունդ կքանդես, էստեղից կքոչես:

- Կբողոքեմ, դու ո՞վ ես որ... Ես հնարք չունեմ, ես ինչի՞ տեր եմ, ես ինչո՞վ եմ ուրիշ տեղ տուն սարքում:

- Կքոչե՛ս:

- Ծախելու էլ չի, թե ծախեմ:

- Ոչ մի ծախել: Կքանդես: Հետքդ էստեղ չմնա:

- Ախր ասա՝ բան հասկանամ, Եգոր պապ, էսքան տարի հարևան ենք եղել, ախր ո՞ր մեղքիս համար ես ինձ պատժում:

- Գնա կնկանդ հարցրու՝ կասի: Ծախսդ ես կքաշեմ, գնա: Էստեղից գնա:

Էդպես, Ուհաննես ջան, քոչել եք վերին թաղը, Սլաբոդկա: Էդ ռսի տունը ձեզ համար Եգոր պապս ա առել: Էսքան բանը դու ինչի՞ իմանաս, Ուհաննես ջան, ինչի՞դ ա պետք:

Բոլշևիկը, որ եկավ, հորդ արևը խնդաց.

- Էհեյ, էս ինչի՞ չեք Առաքլանց Եգորին կուլակաթափ անում, մի դրա թոզը քամուն տվեք...

Երեխա չլինես. Եգորն արդեն տավարը ծախել էր, ընտանիքը հավաքել ու փախել կրասնադարները: Մի քանի տարի սպասեց, էնքան, մինչև որ էս ձեր կուլակաթափության կամպանիան անցավ:

Բալա, Եգոր պապս էր ասում, մտքիդ պահի, մեր տոհմն էստեղացի ա, մեր պապերը էս հողի համար արյուն են թափել, որ մնա մեզ: Մենք հավատարիմ լինենք: Էս երկիրը շենացնողը մենք ենք, պահողն ու շնորհք տվողը մենք ենք: Եղել ենք ու կլինենք, ափսոս ա, որ մեր աշխարհն ընկնի խուժանի ձեռը: Մենք էս սարերի, էս ձորերի անբաժանն ենք: Դրանք որտեղ մթնի, էնտեղ կքնեն, որտեղ ասես կապրեն...

Եգոր պապիս հոգին էս խորունկ ժայռերի ծերպերի ու անձավների մեջ ապրում ա... Լույս դառնա հոգիդ:

Հը՞, Ուհաննես, ինչի՞ ես տնքում, ծանր հոգոցներ ես քաշում, հասկանում ես, որ մեռնեմ՝ որբ ես մնալու, մենակ ես մնալու:

ԿԱՐՈ

Դոդոխը հրճվալից մտավ դասարան, միշտ հրճվալից՝ քամակը բարութ լցրած: Կրքով լիքը, եռանդով լիքը. Դոդոխն ապրում էր առանց կանգ առնելու:

- Տղանե՛ր, հենց նոր սովետական մեր ռադիոն հայտնեց, որ Սմոլենսկի մատույցներում մեր փառապանծ Կարմիր բանակը ոչնչացրել է թշնամու մի ամբողջ գունդ: Ի վերջո, մենք ոչնչացնելու ենք բոլոր-բոլոր ֆաշիստներին, ֆաշիստ շներին ու պատերազմից հետո մեր գյուղատնտեսությունը կունենա... Ի՞նչ կունենա: Ո՞վ կպատասխանի, դե... հը՞: Ի՞նչ օգուտներ կունենա մեր գյուղատնտեսությունը: Չգիտե՞ք... Կարո Առաքելյան... Դե՞... Հը՞...

Կարո Առաքելյանը լարվեց, կարմրեց, ուղեղը քրտնեց, պատասխան չկար, չգտավ:

- Հրաշալի պարարտանյութ կունենա մեր գյուղատնտեսությունը, այ, թե ինչ կունենա: Այսպես ասաց մեր շրջանի ղեկավար ընկեր Բաղդագուլյանը: Մեր անծայրածիր դաշտերում կծփան ցորենի ոսկեզօծ արտերը, ոսոխի ոսկորների վրա: Արագացնենք այդ հաղթանակը: Կարո՛, քեզ եմ հանձնարարում կազմակերպել տաք շորերի ու բրդյա գուլպաների հավաքը՝ ռազմաճակատում կռվող մեր մարտիկների համար:

Ոգևորությունը մեծ էր: Ինքը նամակ գրեց կարմիրբանակային իր հայրիկին և մի ոգեշունչ ոտանավոր՝ ձոնված առաջնորդին:

- Տաղա՛նդ ես, տաղա՛նդ,- ասաց Դոդոխն ու նրան սեղմեց կրծքին:- Ուղարկում ենք և՛ ռազմաճակատ, և՛ «Ավանգարդ» թերթին: Թող տպագրեն:

Ուղարկեց, եթե Դոդոխն ասեր՝ գնա քեզ քարից գցիր, գցելու էր, որովհետև արդեն երեխա չէր ինքը, իսկ նա արդեն ուսուցչուհի չէր...

Երազներ էր տեսնում զարմանալի. ցորենի ծփացող դաշտեր ու հասկերի մագիլավոր արմատներն էր տեսնում, որ մխրճվել էին մարդու ոսկորների մեջ ու ծծում էին ողնուղեղը: Ինքն ու Դոդոխը ձեռք ձեռքի վազում էին էդ ոսկեզօծ դաշտերով, ոտքերի տակ ջարդելով, ճմռելով հասկերը: Մոլեգին հրճվում էին ու վայրագ կրքին տրված՝ գրկախառնվում, մեկ էլ հասկերը լաց էին լինում, և իրենք ցնցվում էին դրանից, քարանում, ինչո՛ւ, ինչո՛ւ, մեղավոր ու անօգնական շշնջում էր Դոդոխը. ինչո՛ւ: Հասկերը դառնում էին իրենց դասարանի աղջիկներն ու արցունքները սրբելով հեռանում դաշտից. դաշտը հանկարծ դառնում էր ամայի անապատ...

Ոտանավորը թերթը չտպեց, հորից պատասխան չեկավ, պատասխան, որից ինքը սրտի խորքում սարսափում էր: Հոր լռությունը երկարեց, միգուցե Մոսոն լսեց իր խորհուրդը ու չխնայեց իրեն, ասենք՝ անմտորեն նետվեց մարտկոցի վրա: Այդ դեպքում ո՞ւր մնաց հերոսի կոչումը:

Համարյա ութ ամիս լուր չկար, իրենց տունը լցվել էր լաց ու կոծով. հորաքույր, մորաքույր, հարևանուհիներ:

Գլուխը որտեղ դրեց...

Ո՞ր չոլում մնաց...

Հրեն այսինչի սև թուղթն էլ եկավ...

Դարդախորով Հիտլեր, բալեքդ մեռնեն...

Լսում էր այս ամենն ու իրեն մեղավոր զգում: Երդվեց, որ եթե Մոսոյին մի բան պատահի, ինքն իրեն վերջ է տալու:

Կոպիտ տաշտշած կոպալին հենվելով, պատերազմը դեռ չավարտված, Մոսոն հայտնվեց: Ծռված, հիվանդ, վիրավոր, կմախք դարձած, կապույտ աչքերը դեղին...

Պատշգամբից նետվեց ցած, ճչաց, ծղրտաց՝ Մոոոոո սո՛...

Մոսոն կոպալը շպրտեց նրա ոտներովը.

- Հույ, ես ձեր...- ու ատամների արանքից,- հեռու կաց:

Շանթահարվեց ինքը, ծեծ կերած շան պես քաշվեց մի կողմ: Մոսո՛, Մոսո՛ ... Վայ-վույը գցեցին հարազատները, որ հավաքվել էին իրենց տանը:

- Լավ,- մռայլ ընդհատեց բոլորին Մոսոն,- մի ջուր դրեք՝ լողանամ:

Լողացավ, պառկեց անկողնում: Ինքը դռների մոտ կանգնած էր, Մոսոն հայացքով երկար չափեց իրեն, ասաց՝ մեծացել ես: Ինքը գլուխը կախեց, ինչ-որ կամ:

Հայր ու որդի երեք տարուց ավելի իրար չեն տեսել, ու այսպիսի հանդիպում: Ու դարձյալ Մոսոն սառը, չոր, օտար...

- Հիվանդ եմ,- մեղմ ասաց Մոսոն՝ կարծես արդարանալով,- կներես:

Ինքը հիշեց Մոսոյին գրած իր նամակ-պատգամը. «Կուրծքդ շքանշաններով զարդարված վերադարձիր... ոչնչացրու ոսոխին, որպեսզի առատ ծփան մեր արտերը... Իսկ եթե... Ես հպարտ կապրեմ քո փառապանծ անունով...»:

Դոդոխյանի թելադրությամբ: Չգրեի՛ր: Կամ գրեցիր՝ չուղարկեիր:

Հրճվալից ավանակ:

Միամիտ երեխա էի:

Արդեն հասուն էշ. նայում էիր Դոդոխի կոնքերին, կրծքին՝ ող-նաշարդ կրքից ցավում էր:

Սեր էր դա, սեր, ուրիշ այդպիսի զգացում չեմ ունեցել: Սեփական

անթերիությունն ու ազնվությունը մասունքի պես բաժանում էր շրջապատին: Դոդոխը: Տզրուկի հակառակը կա՞: Դա է, ոչ թե քաշում տանում է, այլ՝ լցնում էությունդ:

Իրենց եկեղեցին քանդեցին պայթեցնելով: Մի ողջ շաբաթ շրջանի աշխատավորությունը դրանով էր զբաղված: Քանդեցին և եկեղեցու հին գերեզմանոցը: Ժողովուրդը հավաքվել էր. հիմնականում ծեր կանայք, չափառներից այն կողմ կանգնած, դառնադեմ ու լուռ:

Դեղնած ոսկորների կտորտանք, կես փտած գանգեր, երկար ծամեր, ծիրանագույն փիլոնի լաթեր...

Բարձր դասարանների կոմերիտները հարձակվեցին գանգերի վրա, հրճվանքով, հռհռոցով, գանգերը գնդակի տեղ, տշո՛ց, ֆուտբոլ էին խաղում:

Տերտերի գանգ է, առ հա...

Արա, պաս...

Առ հա...

Հի՛, հի՛, հի՛, հա՛, հա՛, հա՛ ...

Շրջանիս ղեկավարությունը խմբված մի տեղ գոհունակությամբ հետևում էր այդ ամենին: Դոդոխը նրանց մեջ էր. բարձր ծիծաղեց: Տատիկների անթերթերունք աչքերից հոսող արցունքները թաքնվում, անհետանում էին նրանց երեսների բազմաձալ խորշոմների արանքներում, նրանցից մեկը նայեց Դոդոխին.

- Ձու ես ածե՞լ, կչկչո՞ւմ ես, վառե՞կ: Լակ ա դուրս գալու ձուդ, լա՛կ:

Հսկա եկեղեցին փլատակվել էր՝ անճոռնի զանգվածների վիթխարի մի բուրգ: Գեշ հոտ էր տարածվել բացված գերեզմաններից, ուրիշ աշխարհի հոտ...

Դոդոխն առանձնացավ խմբից, ուղիղ եկավ դեպի իրեն.

- Կարո՛, դու գնա այստեղից:

Ինքը նայում էր նրա աչքերին, զարմանքով նկատեց և՛ խռովք կար, և՛ տագնապ, և՛ շփոթվածություն: Ուրիշ Դոդոխ էր, անծանոթ: Հետո ժպտաց, հետո քնքուշ ասաց.

- Գնա՛, Կարո՛ ջան, հիմա ես էլ եմ գնալու: Սա քո տեղը չէ...

Կարոյի գլխում փայլակները ճայթեցին, ամպերը գոռացին Կարոյի սրտում:

«Կարո ջան»... քաղցր ձայնով, մեղմ ու մանավանդ դեմքը մոտեցրեց իրեն, որ ուրիշները չլսեն, ու նրա տաք շունչը կպավ Կարոյի շուրթերին ու գլուխը պտտվեց, գիտակցությունը կորավ մի պահ: Հետո հավաքեց իրեն, լուսնոտի պես քայլեց, հեռացավ այդտեղից: Ի՞նչ էր մտածում: Մտածում էր, որ Դոդոխն աշխարհի ամենագեղեցիկ արարածն է, առեղծվածային ու խորհրդավոր, ու ինքը սիրում է նրան անսահման, ու որ սխալ է Դոդոխը՝ մարդու գանգերը պարարտանյութ չեն դառնում հողում թաղված, ամենաշատը դառնում են գնդակ՝ ոտքով տշելու համար, եթե այդ ոտքը անասունի ոտք է: Քամին ավերված գերեզմանոցի գարշահոտությունը խփեց քթին, կանգնեց, շուռ եկավ. Դոդոխը դեռ այնտեղ էր, սիրտը սաստիկ ցավեց նրա համար:

Մոսոն վերջապես ոտի կանգնեց, վերջապես պատերազմն էլ ավարտվեց: Շատ բան մոռացվեց: Իրեն այդպես էր թվում:

Դասընկերոջ՝ Չիտչյան Գուրգենի հետ արդեն ծխում էին ծածուկ, մտել էին գոմը: Հանկարծ Մոսոն ներս մտավ: Այնպես շփոթվեց, որ վառվող ծխախոտը խոթեց գրպանը: Մոսոն զարմացած նայում էր, թե ինչու է իրեն կորցրել, մշահոտ ծուխը դուրս էր գալիս այրվող գրպանից: Մոսոն ամեն ինչ հասկացավ.

- Ծը՛, ծը՛, ծը՛...- գլուխը հանդիմանանքով տմբտմբացրեց,- տղամարդ ես դառել: - Շուռ եկավ, որ գնա, կես ճանապարհին փոշմանեց, կտրուկ հետ եկավ ու ձեռի բաց ափով շրը՛խկ...- էն ի՞նչ նամակ էիր գրել...

- Տեսա՞վ, որ ծխում ենք,- հարցրեց Գուրգենը նրա գնալուց հետո:

- Չէ՛:

- Բա ինչի՞ վզակոթիդ հասցրեց:

- Եսի՞մ:

Երանի ծխելուս համար մի լավ ծեծ տար: Թաքուն հույս էի փայփայում, թե նամակս իրեն չի հասել, կամ մոռացել է: Սա բան կմոռանա՞:

«Ի՞նչ նամակ էիր գրել»:

Գրել էի, էլի: Ոգևորող նամակ:

Արևն օրվա ճամփի կեսն անցավ: Հանկարծ ուժեղ սրտխառնոց զգաց. երևի իրար վրա ծխելուց է: Կանոնավոր միայն էս գործն եմ անում, ծխում եմ շնչելու նման: Ուրիշ քեզ նմանը կա՞:

Դժվար: Կուլտուրական մարդիկ հետևում են իրենց առողջությանը, առավոտները մարզանք են անում, տարին մեկ գնում են հանգստանալու: Ալոն ճիշտ է ասում՝ «տգետ գյուղացի»:

Բայց ինչո՞ւ երկար ապրեմ: Ինչի՞ և ո՞ւմ համար: Պատճառ չունեմ:

Դարձյալ սրտխառնոց... Լավ, մի քիչ պաղպաղակ ուտեմ ու գնամ: Ռոզիկի հայացքը բռնեց, հասկացրեց ուզածը:

Ավտոբուսները բաց թողինք: Ոչինչ, մի բան կճարվի... Կգնամ կհասնեմ:

Ինչի՞ն կհասնես:

Հետաքրքիր է՝ սիրո՞ւմ եմ հորս... Ո՞ւմ եմ սիրում, ո՞ւմ համար կզոհեմ ինձ:

Սիրելը զոհվելն է նշանակում:

Օրինակ՝ մի ինչ-որ բան կամ աշխարհում, որի համար կյանքդ զոհես:

Եթե չկա... Եթե չկա, փուչ է կյանքը, իմաստազուրկ, դատարկ:

Մինչև հիմա չի կարողանում հասկանալ՝ իրականությո՞ւն էր, թե՞ երազ է:

Ճրոբ էր: Վաղուց. տասնչորս թե տասնհինգ տարեկան էր, քնած տեղը ինչ-որ բան զգաց, աչքերը բացեց, ինչ-որ մեկը կախվել էր վրան: Մոսոն էր.

- Էդ ի՞նչ ես անում, Մոսո,- հարցրեց:

- Քնի՛, տղա ջան, քնի՛...- Ու հեռացավ: Ինչքա՞ն կարոտ կար Մոսոյի ձայնի մեջ ու ինչքան փաղաքշանք: Գլուխը մտցրեց վերմակի տակ ու լաց եղավ անձայն: Իրականությո՞ւն էր, երա՞զ...

Մոսոն ինձ սիրո՞ւմ է... Չգիտեմ: Ինչի՞ս է պետք: Կամ՝ ինչպե՞ս իմանամ: Կամ՝ ես ի՞նչ գիտեմ:

Էս ինչ լպրծուն կյանք էր իմ ապրածը, ոտքս մի կոշտ, մի հաստատ տեղ չդրի. ամեն ինչ լպրծուն, սոթլիկ:

Կյանք... Բազմամոլոր, բազմակեղտ, բազմասայթաք, բազմաբարդ, բազմախաբ, բազմամեղ, թռավ, գնաց բազմակոծ...

Ալո՛, Ալո՛... Ի՞նչ... Դե գնա՛, քո... Անտես շղթաներ, գերություն... Ալո... Կյանքի գող, քաղ, քաղ, քաղ... Դժգոհ, միշտ գանգատավոր տխուր քաղ:

Ես ներկա եմ, Ուհաննեսի հետ իբր զրույց է անում Մոսոն.

- Ուհաննես, հերս խախոլներից մի մատակ առավ՝ բա՛րձր, սիրո՛ւն: Ձեռս հետնաբաշին հազիվ էի հասցնում: Ինքը՝ կապույտին տվող, սև ցանն էլ վրան: Հա, անունն էլ Ալո էր... Սիրուն էր, բայց արի տես, որ անբան, մինչև չճիպոտեիր՝ տեղից ժաժ չէր գալիս: Մի օր լծում էր, ասի՝ հայրիկ, էս մեր ձին ինչի՞ ա էսպես գլուխը կախ պահում:

- Պարտքը շատ ա հալբաթ,- ասավ հերս ու ձիու դնչին շրխկացրեց: - Սրա տվողի նանը... Մտքամոլոր մսացու անտեր... Տեսքին խաբվեցի:

Ուհաննես.

- Մոսո, ի՞նչ արավ դրան:

Մոսո.

- Ռադ արավ, ինչ արավ: Քացի տվան էլ էր, քացի տվան... Մի խոսքով՝ անհաջող մի բան էր: Հե՛, հե՛, հե՛ ... Ռադ արավ, բա ո՞նց:

Ուհաննեսին է պատմում, բայց պարզ է, որ ինձ է բան հասկացնում Ալոյի մասին. միշտ դժգոհ սուր պոզը տնկած, հանկարծ ու փեշդ ընկնի դրա պոզին:

Իմ խեղճ Մոսոն դարդ է անում ուրեմն ինձ համար ու արդեն վաղուց ուղղակի ինձ չի դիմում. առակներով, պատմություններով, ակնարկներով ու միշտ ուրիշի ներկայությամբ: Միամի՛տ Մոսո... Կուժ քեզ եմ ասում, կուլա դու լսիր...

- Ախր, ի՞նչ եք անում, ի՞նչ եք անում, էդպես չի կարելի,- Ռոզիկն է մտքերս ընդհատում,- քանի ժամ է՝ սոված նստած եք, ես էլ հակառակի պես ժամանակ չունեմ... Աստված իմ, էս ինչքա՞ն եք ծխել:

Արագ-արագ սեղանը սրբեց, լիքը մոխրամանը տարավ թափեց, լվաց: Մաքրասեր է: Թեթև, կաքավաքայլ թռվռում է, ասես էդ ջրաղացի քար քամակն իրենը չէ: Մատուցարանի վրա խնամքով շարած բերեց պաղպաղակ, հաց ու պանիր, եփած ու կլպած կարտոֆիլ:

- Կերեք,- ավելի շուտ կարգադրեց, և իրավունքով:

Կարոյին դա դուր եկավ, ժպտաց և սկսեց ուտել:

- Կա-չկա ընտանեկան անախորժություն ունեք:

- Ամեն ինչ էլ ունեմ (անսպասելի թեմա): Մի քիչ նստեք ինձ մոտ:

- Ձեր մո՞տ (կարմրեց):

(Այ աղջի, ինչ ես էդպես բոց ընկնում, վառվում, հո չեմ ասում՝ պառկեք):

- Շատ եմ ուզում, բայց... Էս անպետքները որտեղից լցվեցին... Դուք միշտ եք էդպես կտրուկ, էդպես հրամայական, էդպես վճռական:

- Վճռական եմ (հի, հի...):

- Գալիս եմ, հիմա գալիս եմ, համբերեք: Թողնում են, որ մարդ... Ձեր անունն ինչ է:

(Արև եմ ես՝ պաղպաղակի պես հալվեց):

- Կարապետ է անունս, ձեզ համար՝ Կարո:

- Վայ, պապայիս անունն է, հի՛, հի՛, հի՛: Հիմա այդպիսի անուններ քիչ են պատահում: Ինչու՞ եք այդքան տխուր, Կարո:

(Սկսվեց, կարեկցանք, խղճահարություն):

- Ձեր հեռախոսի համարը կարո՞ղ եմ ունենալ (շունչը կտրվեց):

- Հը՞... Այո, բայց... Ինչի՞ համար:

- Չեմ ուզում ձեզ կորցնել:

- Էդպես միանգամից: Չէ, չեմ ասի: Դուք արդեն գիտեք որտեղ եմ աշխատում:

- Հաճախորդները սպասում են ձեզ:

- Թող սպասեն: Չեմ ուզում, որ գնաք:

- Ստիպված եմ, հայրս մահամերձ է:

- Վայ, ինչ եք ասում...

- Հանգիստ (դու էիր պակաս հորս համար դարդ անես): Կատակ եմ անում:

- Համ: Դե ուրեմն ասեք՝ ինչու՞ եք էդպես տխուր:

- Ոչ մեկին չեմ ասի:

- Իհարկե չեմ ասի, ես գաղտնապահ եմ:

- Երդվի՞ր:

- Մամայիս արև:

- Քեզ համար եմ տխուր:

- Հըմ, ը, ը՞...- Հանկարծ ծիծաղեց, թե՞ ծղրտաց... Կտրուկ շուռ եկավ դեպի տաղավարը: - Զահլա մի՛ տարեք, համբերեք, գալիս եմ:

- Ծաղկած վարդ ես, չէ, կոկոն վարդ ես ու իմը չես, ինչպես չտխրեմ (գռեհի՛կ, գռեհի՛կ ապուշ):

- Կարծում եք, եթե այստեղ եմ աշխատում, ուրեմն...

(Իսկ որտեղ պիտի աշխատեիր, ակադեմիայո՞ւմ):

- Չէ, չեմ հավատում ձեր խոսքերին:

- Շատ լավ աղջիկ ես, իմ ճաշակով, անունդ էլ Ռոզիկ չէ:

- Բա ի՞նչ է:

- Անունդ այսուհետև Վարդուհի է: Հայերեն:

Ռոզիկն այլևս չդիմացավ, վեր թռավ տեղից ու սավառնեց մինչև տաղավար:

Էս աղջիկն իր շրջապատն ունի, հայր, մայր. կունենա՝ ջահել է: Հարազատություն, պատվի իր հասկացությունը... Իսկ ինչո՞ւ՝ ոչ: Բավականին սիրունիկ է, ամուսնացած բաժանված կլինի:

Ա՛յ մարդ, քեզ պե՞տք է... Ան-առակ, ան-գլուխ, ան-պատասխանատու, ան-միտ, ան...

Լա՜մա՜վ: Մեկն ավել, մեկը պակաս, ի՞նչ նշանակություն ունի: Ծերտոտվել պրծել ես... Բա՛, ընկեր Բաղդագուլյան, մենք էլ ոչինչ...

Դոդոխին փչացրեց անասունը: Մոսոն կընդունե՞ր Դոդոխին... Հիմա հարսները հազվադեպ են խոնարհ մտնում ամուսնու ընտանիքը:

Արևմուտքում վաղուց սեքսուալ հեղափոխություն է, դու ինչի՞ց ես խոսում: Հետամնաց:

Լավ, հասկացանք... Այսինքն՝ ինքդ էլ կարող էիր ծոցատետր պահել:

Չէ՛ և չէ՛, ո՛չ և ո՛չ: Սիրելով են տրվել ինձ, հավանելով, հաճախ իրենց նախաձեռնությամբ: Մեկը, ե՞րբ էր, անկողնում հանկարծ ծիծաղից խեղդվեց՝ «Ճիշտ էին ասում քո մասին, ով ուզի՝ թոկը կգցի վիզդ, կտանի կմտցնի ծոցը»:

Այսինքն՝ ես որձ կենդանի եմ, անբծախնդիր: Լիրբ եմ ուրեմն... Մի շառաչուն ապտակ կերավ, դուրս արեցի:

Տխուր բաներ:

Բայցևայնպես, բայցևայսպես... Այնուհանդերձ, այսուհանդերձ...

Բաղդագուլյանը կերազեր մի այսպիսի Ռոզիկ ունենար, անշահախնդիր, անկեղծ: Ընկեր Բաղդագուլյան, ձեզ սիրե՞լ են երբևիցե, հը՞: Ցանկացե՞լ են...

Իսկ դո՞ւք: Սիրել գիտե՞ք...

Նախրի միջի ցուլ, բազկաթոռիդ չորս ոտներն են սիրել, կոլխոզի ցուլ, ձեռքիդ կարմիր մատիտն են սիրել, պաշտո՞նդ: Պոչերը ծռել են դրանց առաջ՝ որը կարիքից, որը պաշտոնի համար, հասարակ աշխատանքի տեղավորվելու համար, կամ գործից չհեռացվելու, կամ ինստիտուտ ընդունվելու, չդատվելու, վերջապես՝ մի կտոր հացից չզրկվելու: Պոչերը կողք են ծռել ստիպված, ու թռել ես... Ու քեզ թվում է... Դժբախտ, սրիկա մեծատառով, փեշագերի, սուտ հաղթանակիչ, պաշտոնամոլ-պաշտոնագող, խորամանկ աղվես, կարիերիստ կի-սագրագետ, հացկատակ, թաքուն հաց ուտող, խաբեբա կոմունիստ, կեղծ բարեպաշտ, հարգանք կորզող, պնակալեզներ բազմացնող, քամակ մտնողներին օճառ բաժանող, քամակ ծակը բացած ջվալի բերան, սուտ գովաբանությունների ունկ, էշի ականջ, մեծարանքի մուրացկան, գաճաճների պապա, թզուկների մամա, վախկոտների պետ, անինքնասերների հայրապետ, արնախում կուսակցություն, բոլշևիկ կաշառակեր, ձրիա՜մա՜մա՜մա՜կեր տզրուկ: Դե գնա՛ ...

Վայ էն մարդուն էս աշխարհում, որ խալխի դատած հացն է ուտում:

Ոչ մի վայ, շատ էլ լավ մարսում են:

Ռոզիկին ինչո՞ւ ես ուզում խաբել:

Լա՛վ եմ անում: Թեկուզ վերջին պոռնիկը լինի, պիտի սիրեմ: Գլուխս դնեմ լիքը ծնկներին, հանգստանամ: Ինձ հավատարիմ կլինի, ինձ կսիրի:

Ուրիշի մաքուր ջրերում ուզում ես կեղտերիցդ մաքրվես:

Թեկուզ էդպես: Հա, ի՞նչ կա որ...

Թառամած, ճմռթված, ծեծված, ծերացած շուն, բուրդդ քամուն տված ո՞ւմ ես պետք, ինչի՞ ես պիտանի: Մեջդ տղամարդու ուժ էլ չի մնացել:

Կվերականգնվի:

Թո՛ւհ, թո՛ւհ, ճմռթուկ իմպոտենտ...

Հա, հայ-հայս գնացել, վայ-վայս է մնացել:

Դե ուրեմն տեղդ վեր ընկի:

Հետաքրքիր է՝ ինչո՞ւ են ծնվում. սրա պատասխանը կա՞, թե՞ ոչ:

Չկա՛:

Բա փիլիսոփանե՞րը:

Չգիտեն:

Ես գիտեմ: Քննության համար ենք ծնվում: Մեզ բերում են տեսնելու, թե ինչքան կփչանանք, քանի՞ մարդու կդժբախտացնենք, ինչքա՞ն արյուն կթափենք, ինչքա՞ն սուտ կասենք, էս հրաշք հողագունդն ինչքա՞ն կավերենք:

Մոսոն շենացնում էր...

Զույգ եմ կազմելու Ռոզիկի հետ: Խորհրդավոր թիվը երկուսն է, ամեն ինչ ստեղծվում է երկուսից, նույնիսկ քամին...

Կյանքը քննությունների լսարան է...

Ցնդելուն մոտ ես:

Չէ: Յուրաքանչյուրս գնահատական ենք ստանալու, կամ դարձյալ կլինենք էնտեղ, որտեղից եկել ենք, կամ գեհենի բերան...

Ահեղ դատաստանը պետք է էստեղ անել: Դատական սրահը պետք է երկնակամարի տակ լինի, ի տես բոլորի: Մարդկանց, ժողովուրդների... Վերջապես էստեղ արածի համար ինչո՞ւ են էնտեղ դատում, թող գան դեպքի վայր:

Շատ լավ էլ աղջիկ է Ռոզիկը, միշտ երազել եմ այսպիսի պարզ ու հասարակ աղջիկ: Պա՛րզ, պա՛րզ, պարզաջո՛ւր... Վերջապես կմաքրվեմ ճամփի փոշիներից: Գնամ Մոսոյին թաղեմ, գամ: Պաշտոնապես Ալոյից բաժանվեմ: Իհարկե, ծխելը կթողնեմ, առավոտները մարզանք կանեմ...

Մարդ կա՝ նայում ես աչքերին, քեզ տեսնում ծուռ հայելու մեջ: Ալոն ծուռ հայելի է, իսկ Ռոզիկը պարզ, մաքուր ապակի:

Խելոք իմաստուններից զզվեցինք, կի՞ն ես, թե՞ Կարլ Մարքսը: Բացատրվելուց, բացատրելուց, արդարանալուց, մեղավոր լինելուց մաշվեցինք: Թուհ, թուհ, թուհ...

- Ռոզիկ:- Տե՛ս ոնց ցնցվեց ձայնիցս, խրտնած մատակ: Շփոթվե՞ց:- Խնդրում եմ մոտեցիր, բան ունեմ ասելու, կարևոր, շատ կարևոր:

Վերջապես վճռակա՞ն եմ, թե՞ չէ: Կյանքս փոխելու եմ: Վերջ: Շրջադարձ: Անկյունադարձ, հետդարձ, անդարձ...

Նոր կյանք եմ սկսելու:

Բա փիլիսոփաները:

Չգիտեն:

Ես գիտեմ: Քննության համար ենք ծնվում: Մեզ բերում են տեսնելու, թե ինչքան կփչանանք, քանի՞ մարդու կդժբախտացնենք, ինչքա՞ն արյուն կթափենք, ինչքա՞ն սուտ կասենք, էս հրաշք հողագունդն ինչքա՞ն կավերենք:

Մոսոն շենացնում էր...

Զույգ եմ կազմելու Ռոզիկի հետ: Խորհրդավոր թիվը երկուսն է, ամեն ինչ ստեղծվում է երկուսից, նույնիսկ քամին...

Կյանքը քննությունների լսարան է...

Ցնդելուն մոտ ես:

Չէ: Յուրաքանչյուրս գնահատական ենք ստանալու, կամ դարձյալ կլինենք էնտեղ, որտեղից եկել ենք, կամ գեհենի բերան...

Ահեղ դատաստանը պետք է էստեղ անել: Դատական սրահը պետք է երկնակամարի տակ լինի, ի տես բոլորի: Մարդկանց, ժողովուրդների... Վերջապես էստեղ արածի համար ինչո՞ւ են էնտեղ դատում, թող գան դեպքի վայր:

Շատ լավ էլ աղջիկ է Ռոզիկը, միշտ երազել եմ այսպիսի պարզ ու հասարակ աղջիկ: Պա՛րզ, պա՛րզ, պարզաջո՛ւր... Վերջապես կմաքրվեմ ճամփի փոշիներից: Գնամ Մոսոյին թաղեմ, գամ: Պաշտոնապես Ալոյից բաժանվեմ: Իհարկե, ծխելը կթողնեմ, առավոտները մարզանք կանեմ...

Մարդ կա՝ նայում ես աչքերին, քեզ տեսնում ծուռ հայելու մեջ: Ալոն ծուռ հայելի է, իսկ Ռոզիկը պարզ, մաքուր ապակի:

Խելոք իմաստուններից զզվեցինք, կի՞ն ես, թե՞ Կարլ Մարքսը: Բացատրվելուց, բացատրելուց, արդարանալուց, մեղավոր լինելուց մաշվեցինք: Թուի, թուի, թուի...

- Ռոզիկ:- Տե՛ս ոնց ցնցվեց ձայնիցս, խրտնած մատակ: Շփոթվե՞ց:- Խնդրում եմ մոտեցիր, բան ունեմ ասելու, կարևոր, շատ կարևոր:

Վերջապես վճռակա՞ն եմ, թե՞ չէ: Կյանքս փոխելու եմ: Վերջ: Շրջադարձ: Անկյունադարձ, հետդարձ, անդարձ...

Նոր կյանք եմ սկսելու:

ՄՈՎՍԵՍ

Մեր գունդը մի քանի ձի ուներ, սատկած բաներ էին, բայց ասի՝ սա իմ փրկությունն ա: Շարք կանգնելուց զզվել էի:

Տավարիշչ կամանդիր, ասի, դավայ լոշադեյ մնե ի կրասնոարմեյցու Գրինկո Պոլտորացկոմու: Գրինկոն Սիբիրի ռուս էր, մի ոսկի տղա: Ինձանից ջահել էր, բայց պինդ ընկերացել էինք, ախպոր պես էինք, մի տեղ էինք հաց ուտում: Թիկնեղ, բարձրահասակ տղա էր, սև աչքունքով: Ասում էի՝ Գրինկո, դրուգ, ու տեբյա արմյանսկի կրով: Ծիծաղում էր. բաբկու սպրոսի... Ո՞նց էր երգում, էն ո՞նց էր երգում, Աստված. «Չտո ստոիշ կաչայաս տոնկայա ռյաբինա...»: Հարսնացու էր թողել տանը. ասում էր՝ Մոիսեյ, մոյա նեվեստա պերվայա կրասավիցա ու նաս: Երգում էր մղկտալով, տանջվում էր կարոտից, արտասվում էր, ես էլ հետը, այ տա:

Ի՞նչ եղավ իմ Գրինկոն, յարաբ ի՞նչ եղավ... Եթե ողջ էր մնացել՝ կգրեր, հասցես գիտեր: Պրակլյատայա վոյնա...

- Ա զաչեմ վամ էտի դոխլյատինի,- զարմացավ հրամանատարը:

Այ մարդ, ասի, դու թույլ տուր, ես սրանց լեզուն գիտեմ, հրեղեն եմ սարքելու, շատ գոհ կմնաս:

Մի ամիս էլ չէր անցել, ձիերս խրխնջացին. բուժեցի, գարի ճարեցի ուտացրի, քոքացան: Երկու բեռնասել իրարով արի դեսից-դենից, մինը ինձ, մինը Գրինկոյիս համար:

Այ տա, դու մի ասիլ կրակ եմ սարքել գլխիս, էլ գործից ազատում չկա, հրամանատարից ազատում չկա:

- Խարաշո, Առակելյան, մոլոդեց: Համին ընկավ՝ դավայ տուդա, դավայ սյուդա: Բիստրո, բիստրո...

Արկեր ենք կրում դիրքերը, խոտով ծածկում ենք, ու գյուղի ճամփեքով գնա արի, գնա արի: Ժողովուրդն էլ մի կողմից ա խեղդում՝ պոդվեզի, դովեզի... Կնիկ, երեխա, պառավ... Այ մարդիկ, ասում եմ, նե վիդիտե, սնարյադի վեզու, կակ նեմեց վզարվյոտ...

Վսյո ռավնո պրապատադ... Ով ո՞ւր ա գնում, ինչի՞, շունը տիրոջը չի ճանաչում, անտեր արած ժողովուրդ:

Մի Աստծու օր դիրքերից հետ եմ գալիս, ի՞նչ եղավ հանկարծ, մի դժոխք սկսվեց, գետինը դղրդաց, ի՞նչ ռումբեր՝ կարկուտ: Մերոնք՝ նրանց, նրանք՝ մերոնց...

Ձիերս խրտնել, կատաղել են, վախից մի պոկվել են պոկվել... Սանձերը պինդ փաթաթել եմ ձեռիս, մին աջ եմ ծռում ձիանոնց դնչները, մին՝ ձախ. ռումբերը պայթում են, փոսեր են, ծուխն ու փոշին երկինքը կալել ա:

Իմ բախտից տեսա հեռվում արևածաղկի դաշտ, պահեցի էդ կողմը, ասի անասունը էդտեղ ուժասպառ կլինի, կհանդարտվի: Հասա էդտեղ, արևածաղկի բարձր ցողունները ջարդոտելով, փշրելով խրվեցի դրանց մեջ: Վերջապես ձիերիս պահեցի, հանգստացրի, ես էլ շունչս տեղը բերի: Նայում եմ, այ տա, որ կողմը նայում եմ՝ արևածաղիկ ա: Էս ինչքա՞ն եմ խորացել, սրա ծերը որտե՞ղ կլինի: Մութն ընկավ, ձիերիս արձակեցի ու էդտեղ էլ գիշերեցի: Առավոտը ծեգին ձիերս նորից լծեցի. հիմի ո՞ւր քշեմ, ո՞ր կողմը գնամ, ճամփի նշույլ չկա, մի արահետի... Գնացի արևածաղիկը տակով անելով, արդեն հասած, դեղնած ոսկի: Համա քրտինք ա թափած, հա՜: Բայց դե աչքիս բան չի գալիս, մտածում եմ դուրս պրծնեմ էս գերությունից, գնամ մեր գունդը գտնեմ: Մեկ էլ, նայում եմ, աչքերիս չեմ հավատում, էս ի՞նչ հրաշք էր, էս երկնքի՞ց իջավ... Չորս, հինգ տուն. դեմ եմ առել մի պուճուր խուտորի: Տներն իրար նման սպիտակ, սիրունիկ կանաչ այգիների մեջ փայլփլում են արևի տակ: Բոստաններում կանաչը փարթամ աճել ա, մոլախոտն աշխարհը տիրել ա, ծառերը բերքի տակ ճկռած... Ու կյանքն էդ ա, կյանքի ուրիշ նշույլ չկա, մեռյալ լռություն: Պատերազմն էս ի՞նչ եղավ, էս ինչքան եմ հեռացել...

Մին էլ աչքս նկատեց՝ տներից մեկի առաջ մի բան ժաժ եկավ, քշեցի դենը: Սպիտակ շապիկով, դոշ-մոշը բաց, սմքած ծծերը կախ ընկած ալեհեր պառավ, պառավ մի կնիկ: Երևում ա ինձ վաղուց էր նկատել, բայց որ մոտեցա, երեսը լեն-լեն խաչելով այսահարված հետ-հետ գնաց, կպավ փայտե չափառներին:

Ուխադի, սալդատ, ուխադի, ինձ ա ասում, խուտորում մարդ չի մնացել, փախել են, մեռել են, սպանվել են: Խուտորում տեսիլքներն են մնացել, չարքերը, ասում ա, մթնով քեզ կհալածեն, ջրհորը կգցեն, գնա, գնա, գնա...

Խելքը վախից թռցրել էր խեղճը, կամ ո՞վ գիտի...

Ասի՝ լավ, պառավ, գլուխը քարը քո չարքերը, կգնամ, կենում եմ էստեղ ինչ անեմ: Բայց ձիանոնցս պիտի ջրեմ:

Ջրհորի տեղը դեղնած, չորացած ձեռով շանց տվեց ու էլ հետ իրանն ա քշում՝ գնա, հա, գնա: Մարդ չկա, մենակ ես եմ մնացել, ոտներումս ուժ չկա, որ ճամփա ընկնեմ, սատանեքը կապել են ինձ էստեղ, որ մնաս՝ ինձ վրա կբարկանան, ասում ա, փորձանք չդառնաս իմ գլխին, շառդ քաշի, գերմանացին, որ քեզ էստեղ տեսնի...

Ինչ ասեմ, հարյուր տարեկան կլինի, մի ցնդած, խելքը կորցրած արարած, բայց արի տես, որ մահից վախենում ա: Լույսի պես ջահել տղերքը, կյանք չտեսած, կնիկ չտեսած, դեռ օր ու արև չտեսած կանգնել են դեմ դիմաց, իրար կոտորում են...

Ջրեցի ձիերս ու խուտորից դուրս եկա: Նեղ ճամփա էր, շատ նեղ: Երկու կողմից էլի արևածաղկի դաշտ ա, ձգվում ա, ձգվում ա. ռսի տափաստաններ, գնա, թե ծերը գտնես...

Դեղին արևը ծոր ա տվել դեղին դաշտերի վրա:

Մի քանի հատ թխլիկ, հասած բաթաթներից պոկեցի, ասի նհար անեմ, մինչև մի տեղից ուտելու բան ճարվի: Զրթացնելով ձիերի առաջն ընկած գնում եմ ու մտածում՝ էս ո՞ւր եմ գնում, էս ճամփեն ինձ ո՞ւր ա դուրս բերելու, գնամ ու ընկնեմ գերմանացու ռեխը... Մին էլ արևածաղկի դաշտը պրծավ, սկսվեց պոմիդորի տնկաստանը: Հասել են՝ խոշոր, կարմիր, աչքդ կարմիր կրակի ծերը չի գտնում: Ո՛չ սրա տնկողը կա, ո՛չ քաղողը: Ձիերիս սանձը բռնած՝ սելս քաշեցի հենց բոստանի մեջ: Հեյ հա, ինչ հողեր են, գնա, թե մի քարի կտոր գտնես, փխրուն, փափուկ պառկի ու քնի... Չոքել եմ թփերի գլխին, ջոկջոկում եմ, մին էլ երկնքից մի ձեն.

- Տի չտո, սոլդատ, չուժոյե դոբրո վորույեշ...

Գլուխս վեր քաշեցի... Կինարմա՞ն ա կանգնածը... Տեսի՞լք ա... էս ի՞նչ ա: Աջիցս կարմիր կրակ ա, ձախիցս դեղին բոց ա, ու էդ բոցերի մեջ կանգնած... Գլուխս պտտվեց, շաղվեցին աչքերս: Խուրձ արած ցորենի հասկ ծամերը գցել ա դոշին, աչքերն արևից կկոցել, արևը փշրվել, լցվել ա աչքերը... Ինքը ցորնագույն, երեսն ու աչքերը՝ մտիկ արա, թե կշտանաս, ինքը բոյով ու լխտիկ՝ ձեռդ գցի մեջքին, որ նվաղես, ձեն ունի՝ հարբես, ինքը հրեղեն, ինքը հեքիաթի հրաշք...

Նաստյա...

- Տի չտո՞ տուտ պոտերյալ:

Լեզուս կապ ա ընկել, սիրտս դառել ա դարբնի մուրճ, քունքերիս մեջ՝ գը՛մփ, գը՛մփ...

Ատամնաշարը բացեց, ժպտաց.

-Նո՛ւ...

- Աղջի, տեբյա պատերյալ...

Պառավը խաբել էր ինձ. խուտորում Նաստյան էլ կար:

- Բա՞բուշկա: Դա օնա մենյա ուկրիվայետ, օնա մոյ դոբրի անգել:

Դադարեցրինք մի քանի օրով պատերազմը, մի քանի օրը մի ապրած կյանք էր երազի մեջ, ու էլի օրեր, էլի օրեր, ո՞նց թռան գնացին: Չհասկացանք, աշխարհը մոռացանք... Աշխարհն էս ի՞նչ բան է: Թե դու ինձ համար ես ստեղծված, էս ինչի՞ ես էստեղ ծնվել ու ոչ թե էնտեղ: Թե Աստված քեզ ինձ համար է բերել լույս աշխարհ, բա ինչի՞ չես իմը, ինչի՞ ես ռուս, ես՝ հայ...

- Նաստյա, էս ո՞նց կլինի, ինձ կհամարեն դասալիք, կգնդակահարեն:

- Տուտ տեբյա նե նայդուտ, խուտոր տո զաբրոշեննի: Պոյեդու վ ստանիցու, ուզնայու չտո կ չեմու:

Ձին հեծավ թռավ: Իրիկնադեմին եկավ: Սեպերը ցցած խնդում ա, կախվել ա վզովս, պոկ չի գալիս:

- Հը՞, աղջի...

- Մերոնք նահանջել են, հետ են քաշվել, ոչ ոք չկա, գունդդ էլ չկա, չկա, չկա՛, էլ չկա:

- Էդ ինչի՞ ես ուրախացել, շան աղջիկ:

- Տեղ չունես գնալու, էլ քեզ բաց չեմ թողնելու, իմ գերին ես: Նե կ նեմցու վ պլեն պոպալ, ա կո մնե, դուրաչոկ մոյ... Բոգ պոսլալ, բոգ պոսլալ: Էստեղ պահելու եմ քեզ, թաքցնելու եմ ճամփեքից հեռու, աչքից հեռու, չվախենաս, ռոդնոյ, միլիյ...

Ու ամեն օրը դառավ մի ծիծեռնակ, սիրուն, սիրուն թռչում են:

Նաստյա...

Գիշերներն ականջիս մեջ փսփսում ա.

Գերմանացին գա, կպահեմ քեզ, մերոնք գան՝ կպահեմ, ո՛չ սրանց եմ տալու, ո՛չ նրանց: Լյուբով մոյա վելիկայա:

Կռիվը թող վերջանա, սիբիրներում կկորչենք, մեզ ո՞վ կգտնի, չմտածես, չանհանգստանաս:

Էս տունը քոնն է, էս հողերը մերն են, իմն ու քոնն են: Ուռոդ զդոխ-նետ, կոլխոզնի կոշմար կոնչիտսյա, վսե վերնյոմ: Էս խուտորը իմ պապինն է եղել, մենք ենք տերը, կմնանք էստեղ:

Չես ուզում՝ կգնանք...

Ուզում ես՝ ինձ տար ձեր երկիրը, աշխարհի ծերը...

Կուբանը լավ տեղ է, հողը հարուստ է...

Մորս նման բեղմնավոր...

Յոթ երեխա ուներ մերս...

Ես էլ կծնեմ քեզ համար...

Մերոնց կուլակաթափ արին, քշեցին բոլորին: Չգիտեմ՝ ո՞վ է ողջ, ով՝ մեռած...

Ինձ քեռիս փրկեց...

Էս պառավն իմ քեռու կնիկն է...

Ես մեր տան ամենապստիկն էի, իրենց ամբարում թաքցրին...

Ուզո՞ւմ ես՝ քաշվենք դեպի հյուսիս, մերոնց գտնենք...

Ոնց որ կարգադրես...

Բայց էս մեր հողերն են...

Ոնց որ հրամայես՝ էնպես էլ կանենք... Ոնց որ հրամայես...

Մի օր էլ ներս ընկավ, երեսին գույն չկա:

- Գերմանացին եկել է, քաղաք է մտել: Ի՞նչ ենք անելու... Բայց չվախենաս...

- Թող գնամ, հեռանամ: Որ գան ինձ բռնեն էստեղ, քեզ էլ հետս են սպանելու:

Թռչունի պես էր քնում գիշերները, ականջը սրած, մի աչքը բաց:

- Դու քնի, քնի, չանհանգստանաս, ես քո պահակն եմ, կիսկեմ: Աստված մեզ կպահի, գոլուբ մոյ սիզոկրիլիյ...

Նաստյա...

Ամեն ձենի հետ, ամեն պատահական խշշոցի կամ շան հաչոցի վրա ցնցվում էր, շապկանց դուրս էր թռչում: Հետո գալիս էր, զգուշությամբ կողքիս պառկում: Սրտիկը՝ գը՛մփ, գը՛մփ, գը՛մփ... Դրա սրտի գմփոցից զարթնում էի...

Նաստյա՛...

Լեզուն վախից չի պտտվում, որ խոսք ասի: Շնչում ա, կարծում եմ,

ուր որ ա թոքերը կպայթեն: Գրկում եմ պինդ, կպցնում սրտիս: Լաց ա լինում, անձայն, լաց ա լինում, բարձր թռչում...

- Նաստյա, սա կյանք չէ, Նաստյա ջան: Ես որ գնամ, դու հանգիստ կապրես, աղջի: Էսքան ահ ու դողին քո սիրտը ո՞նց դիմանա, կամ ինչի՞:

- Մոլչի, մոլչի,- քունջս ա մտնում,- մոլչի, նետ բեզ տեբյա ժիզնի, նե նուժնա մնե:

...Էսպես էլ չի լինի, որ գան ի՞նչ եմ անելու մի քոսոտ հրացանով, մի քանի հատ փամփուշտով: Զինամթերք ունենայինք, հերն էլ անիծած, կկռվեինք գոնե, կպաշտպանվեինք:

- Առավոտը կգնամ, կճարեմ: Եստ ու մենյա պարտիզան ռոդստվեն-նիկ...

Գնաց: Սելը լիքը լցրեց բոստանի բարիքներից ու քշեց, գնաց ահը կտրածը:

Նաստյա, ասում եմ, երեսիդ մուր քսի, գլխաշորովդ ծածկի, երեսդ փակ պահի, գերմանացին չտեսնի, կփախցնեն քեզ: Ծիծաղում ա... Քեռակինն էլ կողքիս ա, ճամփու ա դնում, պոմոլյուս յա, բոգա մոլիտյ բուդու, սբերեժյոտ օն տեբյա, նե բոյսյա... Ու խաչակնքում ա, խաչակնքում ա...

Գնաց: Կեսօրն անցավ չկա, մթնել ա՝ չկա: Խելագարվեցի: Էս ի՞նչ արի, տեր Աստված, էս ո՞ւր ուղարկեցի իմ հրեշտակին, իմ խելքն ո՞ւր էր... Հրացանս առա ճամփա ընկա: Անձրև ա մաղում, ոտիս տակը ցեխ, մինչև ծնկներս ցեխ, հողը դառել ա խմոր... Ո՞ւր եմ գնում, որտեղ եմ գտնելու, գտնելո՞ւ եմ...

Հեռվից հեռու սելի ծանր ճռռոցն ականջովս ընկավ, վազեցի լեղաճաք. Նաստյա, Նաստյա...

Ինքն ուժասպառ, ձիերն ուժասպառ, ակները մինչև սռնին խրվում են ցեխի մեջ. թրջվել մուկ ա դառել, ձիերի առաջն ընկած, սանձերից մի կերպ քաշում ա.

- Տի չեգո՞ վիշել, տի զաչեմ վիշել իզ դոմու, կրուգոմ տանկի նեմեցկիե շնիրյայուտ...

Ճվաց վրես ու դոշովս ընկավ, խեղճը, ծնկները ծալվեցին, կախվել ա ինձանից ճաքճքվում ա, լաց ա լինում ձենով, լաց ա լինում վախից, ուրախությունից... Զնաչիտ լյուբիշ, զնաչիտ լյուբիշ...

Ու հանկարծ գետինը դղրդաց, ցնցվեց աշխարհը. տանկեր են գալիս, ոչ թիվ կա, ոչ հաշիվ: Մերոնք են, նրանք են, էս մթնում ինչ կհասկանաս: Սառեցինք մնացինք մեր տեղում անշարժ: Տանկերը համարյա մեզ քսվելով եկան անցան ու սկսվեց կրակոցը: Հեռահար թնդանոթներ են, տանկեր են, տո ինչ իմանամ ինչ զահրումար ա. դժոխք ա, այ տա, դժոխք...

Ուժասպառ, համարյա ուշաթափ ա իմ Նաստյան: Խստեցի դրեցի սելին, ինքս ձիերի հետ լծվելով հասցրի տուն: Զենք ու զինամթերք էր բերել, ապրուստ էր բերել:

Մերոնք գնացին, գերմանացին եկավ, գերմանացին գնաց, մերոնք եկան...

Էսպես թե էնպես՝ ես երկու կողմից էլ կորած եմ, ես ուրեմն հեչ, բայց մերոնք, որ քեզ բռնեն ինձ հետ, կուլակի աղջիկ, դասալիքին պատսպարելու համար ճվահան են անելու: Վաղ, թե ուշ մեկն ու մեկը մտնելու ա էստեղ: Մեկի համար դավաճան եմ, մյուսի համար՝ թշնամի... Կռիվ ա, սովետ կա, ֆաշիստ կա... Ո՞վ կթողնի, որ մենք հանգիստ ապրենք, կյանք վայելենք: Սրանց ձեռներից ոնց պրծնես, ուր թաքնվես:

- Դու դասալիք չես, ես դավաճան չեմ: Ես էլ եմ մասնակցում կռվին: Հիտլերն ու Ստալինն իրենց համար են կռվում, ես էլ ինձ համար, իմ սիրելու համար...

Կատակ ա անում ու ծիծաղում թանձր, թանձր...

Նաստյա... Լուսերես... Անկշտանալիք...

Երևում է գերմանացին պարտվելու է, հետ է քաշվելու: Ուզում ես հետները շարժվենք, գնանք իրանց կողմերը, հանձնվենք: Որտեղ էլ լինի, կյանքն ինձ համար քեզանով է կյանք, որտեղ էլ լինի, քո անունով, քո հոտով է կյանք...

Չէ, Նաստյա, էս մի գերությունը հերիք ա, մի Ստալինը մեզ հերիք ա: Որ գերի ընկնեմ, երեխեքիս էնտեղ օր ու արև չեն տա, կհալածեն, կչարչարեն: Ես սրանց լավ գիտեմ, ցեղս կվերջացնեն... Կընդհատվեմ...

Ջուր եմ ուզում... Ուհաննես, հասի, ջուր...

Վերջ, գնացի... Նաստյա... «Կուրծքդ զարդարվի սովետական

շքանշաններով: Կարմիր աստղը շողշողա...»: Տղա՛, դու գիտե՞ս ինչ ա պատերազմը... Կինոյից... Իմ ձորը, իմ երեխեքը... Ծնել ես՝ տեր կանգնի... Որձ շունն ես, թե՞ տղամարդ... Որբ կմնան, Նաստյա, սովից կկոտորվեն... Ո՞ւր ես տանում ինձ. Սիբիր, Գերմանիա... Խալխի հողերում ի՞նչ գործ ունեմ... Աստված ինձ հայի երկրում ա ծնել...

Սոկոլ տի մոյ, նե բրոսայ...

Ուհաննես, Նաստյա, Կարոն ի՞նչ եղավ... Արևածաղիկը դառնում ա կնիկ... Աչքովս տեսա, որ դառավ արևապատկեր, արևածաղկունք... Քրտինքն աչքերի տակ ուլունք կապած... Ամեն աչքը արևից վառվող արևածաղիկ:

Ուհաննես...

Կարո...

Նաստյա...

ԿԱՐՈ

Խաչմերուկների խառնաշփոթի հետ կռիվ տալով, ծխելով, մխալով, փռթփռթալով, մաշված, հոգնած՝ ավտոբուսը մի կերպ դուրս եկավ քաղաքից:

Բարեբախտաբար հասավ լրացուցիչ երթուղուն: Պարտադիր հրմշտվելով ուղևորները լցվում են ներս: Հերթերն ու բրթբրթվելը մարդկանց համար սովորական են դարձել: Չեն էլ նկատում, սովորական բան է դարձել: Իսկ ինքը սիրտ ճաքելու աստիճան նեղվում է մարդկանց կպչելուց, մարմինը դուրս է տալիս:

Հերթ... Հերթով...

Հերթո՞վ... Խարդախություն, սրիկայություն... Դու կանգնիր օրինավոր, գլխիդ վրայից տալիս են ծանոթին: Դու առաջին կանգնած նվաղիր: Հետևի դռնից կարևոր անձինք մտնում, փաթեթները թևի տակ դրած դուրս են գալիս: Քեզ համար կշռում են, տալիս են ուրիշին: Բողոքես՝ ատամ են ցույց տալիս, գռմռում են շան պես...

Հերթ... Լկտի ճարպիկների, խուլիգանի տեղ: Դու քեզ կեր արդարության տենչից, տանողը տարավ: Դու մնա սպասող հաջորդ հերթում: Երեք հարյուր միլիոն մարդ տասնյակ տարիներ հերթ է կանգնում ամեն ինչի համար...

Հեռվում սպասեց մինչև բոլորը տեղավորվեցին: Բա որ տեղ չմնամ: Հերն էլ անիծած, ավելի լավ, կգնաս գիշերը Ռոզիկի մոտ, առավոտյան շուտ կգաս, տեղով տոմս կառնես: Ավտոբուսում համարյա տեղ չմնաց, ինչպես ասում են՝ լցված են իրար գլխի: Երկմտեց՝ գնամ, չգնամ: Ռոզիկի մոտ գիշերելու միտքը հրապուրիչ էր:

Բայց Մոսոն...

Ավտոբուսը շարժվելու վրա էր, վարորդը դուռը բացեց նորից:

- Ա՛յ ընկեր, ինչի՞ ես կանգնել շվարել, էսօր էլ մեքենա չի լինելու, արի խցկվի էլի... Տեղ տվեք, ժողովուրդ, էս մարդուն տեղ տվեք: Նեղ արեք, տեղ արեք, հե՜, հե՜, հե՜ ...

- Տեղներս նեղ, սիրտներս լեն, թո՛ղ գա...

Բարի էլ են տես որ... Փթանոց կրծքերով լայներես լոռեցի մի կին, լաչակը ճակատին կապած, հաստլիկ կռները պարզեց.

- Արի՛, արի՛, ախպեր ջան, արի մոքորը, մոքորի դոշն էլ ա լեն...

Ուղևորների հռհռոցը պայթեց, ավտոբուսը ցնցվեց տեղում: Արևի տակ քրտնքախաշ են եղել, բայց հումորով էլ են տես որ: Մարդկանց վրայով, բոխչաների ու զանազան կապոցների վրայով լոք-լոք արավ, վերջին նստարանին մի անկյուն գտավ, մի կերպ տեղավորվեց:

Էս է... Քո տեղի, քո բաժնի համար ճրբ ես կռիվ տվել որ: Ինչ որ մնացել է. փշրանք, ինչ որ ստացվել է, հոսանքն ինչ որ բերել է, քամին ինչ որ շպրտել է, ինչ որ բարեհաճել են տալ, ինչ որ մեկ ուրիշն արդեն բանացրել է: Լղլղած կերակուրներ... Թերմացք... Էս Ռոզիկն էլ մեկն ու մեկի թերմացքը կլինի...

Ժամանակները փոխվել են. դա ինչ նշանակություն ունի, պարզապես հետամնաց ես, հնաոճ:

Եկեք նորաոճ փողոցներում իրար շալակ թռնենք:

Չարաշահել են ազնվությունս, պարկեշտությունս:

Դա զենք չէ, ծամոն է:

Համեստությունս...

Դուրս մի տուր:

Խղճացել եմ, թերևս այդ պատճառով:

Խղճում են խեղճերը:

Սենտիմենտալ եմ ու ռոմանտիկ:

Սրտաճմլիկ խլնքոտ: Քթիցդ բռնած ով ուր ուզեց, քարշ տվեց, լղլղացրած լրբին դարձրիր տիկին:

Մեծահոգաբար...

Հիմար, անանձնական տխմար, գրական-դրական հերոս... Թուհ, թքեմ կյանքիդ վրա: Մուլտկինոյի բարեգործ հերոս: Հիվանդոտ, մելամաղձոտ, մելամաղձիկ, մելամաղձագար...

Եվ հզոր էի, և համարձակ: Դոդոխն ինձ սիրեց...

Բա ինչո՞ւ իսկույն անհետացավ: Գնաց դեպի Բաղդագուլյանը, դեպի քեզնից ուժեղը...

Ի՞նչ ասաց.

- Մի կտոր հաց կա մեջտեղում դրած, երիտասարդ, տասը մարդ, դու էլ մեջները: Սոված են բոլորը, սոված եք: Ուրեմն սրանք ի՞նչ են անում:

- Միմյանց հրելով հարձակվում են այդ կտոր հացի վրա:

- Ապրես: Իսկ դու ի՞նչ ես անում:

- Չգիտեմ: Համենայն դեպս՝ այդպես չեմ կարող:

- Համեստ ես:

- Թեկուզև:

- Դաստիարակությունդ, արժանապատվությունդ թույլ չեն տալիս:

- Ասենք թե:

-Բայց աշխարհս մի կարաս ա... Սունդուկյանին հիշեցի՞ր:

- Ով մեկին դեսը կբրթի, մեկելին դենը...

- Ապրես, հիշում ես, բայց չես կարող... Ուրեմն քաղցած մնացինք ես էլ, դո՛ւ էլ, որովհետև ես էլ չեմ կարող:

- Տեսնո՞ւմ եք:

- Բայց ես ուրիշ բան եմ կարող: Ապրելու ուրիշ ձև կա, եթե կուզես՝ փիլիսոփայություն: Լինել այնպիսին, որ ոչ ոք, ոչ մեկը չհամարձակվի քո ներկայությամբ ձեռքը պարզել, թեկուզ սովից սատկի, ձեռը պարզի քո հացին... Ինձնից հետո, միայն ինձնից հետո, էն էլ եթե իրավունք տամ:

...Հերթը երկար պոչավոր էր, ինչպես միշտ: Կիզիչ արևից ուղեղս կարծես ջրիկացել էր, թեթև տմբտմբացնելուց գանգիս մեջ

լղկլղկում էր: Քոսոտ շուն, լեզուն դուրս գցած, ապշացած ներս եմ քաշում տաք, չոր օդը: Մոռացել եմ, թե ինչո՞ւ եմ այստեղ... Մոսոն երկրորդ տարին է՝ ռազմաճակատում է: Խանութը մի նեղլիկ քիվ ունի՝ նեղ կտուրի երկայնքով: Առջևում կանգնածները մի տասը-տասներկու հոգի, ոչխարների նման գլուխները խոթել են նեղլիկ ստվերի մեջ. Բախտավորնե՛ր... Հացը մոռացած՝ ծույլ, բայց գերիշխող մի ցանկություն ունեմ՝ դրանց մեկի տեղը զավթել: Ո՞նց, հերթը չի կրճատվում, ես առաջ չեմ շարժվում, որովհետև հացը դեռ չեն տալիս, իսկ չեն տալիս, որովհետև չեն բերել: Ժամանակ առ ժամանակ ստոր մի լուր է տարածվում հերթում, թե հացը չեն բերելու, թե փուռը փակ է, թե ալյուր չկա:

Հերթը դառն ու հուսահատ տնքում է:

- Սուտ է,- ծղրտում է հերթի մեջտեղերում կանգնած, չոր, տաշած կոպալի պես անկեղև, դեղնասև երեսով մի կինարմատ,- սուտ է, չհավատաք, ժողովուրդ ջան: Հերթը պահեք ու սպասեք, սպասեք, սպասեք... (ձայնն էլ է տգեղ):

Բերեցին... Հերթն աղմկեց, ղռղռաց, շնչեց, չարությամբ կենդանացավ, գվվոցն ընկավ մեջները. բարձր ճնշման էլեկտրալարերի գվվոց:

Վեճեր են բռնկվում.

- Ես քեզնից առաջ եմ...

- Բարով եկար...

- Ես քեզ չեմ հիշում...

- Ես հիշում եմ, առավոտվանից եմ կանգնած...

- Հեռու կաց, թե չէ մազերդ կպոկեմ: Երեխեքս սովից կոտորվում են...

- Ժողովուրդ, ձեն հանեք...

- Բա որ ասում էի:- Կոպալ կինն է: - Մեր հարազատ իշխանությունը ճոբ է մեզ առանց հացի թողել, որ...

Մարդիկ սեղմվեցին իրար, երկարությամբ հունցվեցին, ճզմվեցին, հյուսվեցին իրար. բազմագլուխ, բազմաոտ, բազմալեզու... Հեքիաթի հրեշ:

Կարոն հերթը բռնել էր դմակավոր մի կնոջից հետո: Հետևից ճնշումն այնքան ուժեղ էր, որ ակամա տպվեց նրան, քիթը խրվել է նրա

մեջքի փափկության մեջ: Ինքն էլ չհասկացավ, թե ինչ կատարվեց հետը, բայց գլուխը պտտվեց, երևի հպումից, կամ նրա հոտից: Հոտ, որ դեռ անծանոթ էր իրեն, բայց բնազդով էր հասկանում հիմա, որ սա քաղցր ու կործանիչ հոտ է, կնոջ հոտ, էգի... Երանություն... Բարակ շոր էր տիկնոջ հագին, ու ինքն ամբողջ մարմնով զգում էր նրա ողորկ մարմնի ելևէջները: Հերթը, հացը, շոգը, քաղցը չկային այլևս. կար անսովոր պրկված ողնաշար, եփ կար ներսում, շոգից թունդ, անհայտությունից ծնված ուժ, կիրք ու պղտորված գիտակցություն: Դեռ բացատրություն չկա, բայց հրաշալի է... Ու աչքին Դոդոխյանը եկավ, նա էլ սրա նման է. մի օր այսպես կպչեմ նրան էլ... Անծանոթ ինչքա՜ն հրաշքներ կան աշխարհում, որ ես չգիտեմ:

- Ես հերթս պահել էի, էս ջահելը գիտի, հանգիստ կացեք,- լկտի, անամոթ ձայն,- ընչի՞, ես ձեզ խաբո՞ւմ եմ:

Գունդուկլոր մի քեռի, մազութի տակառի պես պինդ ու բութ, որտեղի՞ց հայտնվեց: Հաստ ուսով արանքը ճեղքեց ու խցկվեց իր ու դմակավորի արանքը: Ինքը անհամարձակ քաշեց նրա ձեռքից ու... կատվի քոսոտ ձագի մլավոց, իբր բողոք:

-Քեռի՛, քեռի՛, ինձանից առաջ մի կանգնեք, դուք էստեղ չէիք:

Քո կուլտուրական ինչն եմ ասել, հա... Քեռին դժվարությամբ կռացավ նրա ականջին.

- Սուս կաց, անամոթ, թե չէ կասեմ, հա, թե ինչ էիր անում էս կնկանը օրը ցերեկով: Փչացած շուն...

Շվարեց, վախեցավ... Իսկապե՞ս հանցանք էր գործել... Այո, երևի, բայց...

-Քեռի...

Հիմա հանկարծ շատ հստակ ու պարզ լսեց, հեռու հեռուներում կորած, հալված իր ձայնը՝ մեղավոր, խեղճուկրակ:

Ողորմելի կատվի դոխ, լուծ ընկած հորթ թրքոտ պոչով, ցռան...

Ինչ մեղավոր, ի՞նչ բան: Ո՞ւմ տեսար էս աշխարհում, որ իր մեղքն ընդունի: Ինչո՞ւ ընկրկեցիր, մտար պատյանիդ մեջ խխունջի նման: Քո իրավունքն ո՞վ էր պաշտպանելու, քո մի կտոր հացը ինչո՞ւ զիջեցիր, քո պատառը բերանիցդ փախցրին: Ուրուրի նման ինչո՞ւ չհարձակվեցիր աչքերը հանեիր, երեսն ինչո՞ւ չճանկռոտեցիր, արյունլվա

անեիր: Դե հետ գնա, վերադարձիր կյանքիդ սկիզբը, առաջին կռիվդ մարդավարի արա, տղամարդու նման ծեծվիր, ջարդվիր, մեռիր, բայց մի պարտվիր... Գնա, հետ գնա, նորից սկսիր, գնա՛, գնա՛, գնա՛ ... Գուցե ուրիշ կերպ ընթանա կյանքդ:

- Քեռի...

-Հացը, թե ինձ վրա պրծնի, հետ եմ քաշվելու, որ դու վերցնես, չվախես:

Այժմ էլ տպված է այդ մարդուն, արևից ու քրտինքից խունացած նրա բլուզին, ու գլուխը պտտվում է իսկականից: Սովից, հոգնածությունից, շոգից, սրա քրտինքի գեշ հոտից... անօգնականությունից... Սրտխառնոց...

Քեռու պետքը չէ, քեռին կպել է, պինդ կպել է երևի տղամարդու կարոտ դմակավորին:

Ճնշումն անսպասելի թուլացավ, բայց ինքն արդեն կանգնած է կշեռքի մոտ: Կոշտ ու պռոտ կին է հացավաճառը:

-Հացս տվեք, հացս տվեք...

- Չկա՛, այ տղա, չկա՛, քանի՞ ասեմ,- ցույց է տալիս դատարկ թարեքները,- չկա՛, նետու, յոխ, արարիս, նիխտ...– Ու լայն բերանը բացած ծիծաղում է:

- Բա հերթը իմն էր, բա էն քեռին...

- Ձեզ մատաղ, մի էս լուսնոտին դենը տարեք, ես սրա գլուխը չունեմ, էս ո՞ւմ մոլորվածն ա...

Ինչ-որ մեկը կոպիտ ու ցավոտ հրեց: Հետ-հետ գնաց Կարոն ու ցցվեց փողոցի մեջտեղում: «Տու, տու, տու...», բեռնատարի խռպոտ, խզված շչակը կատաղած իրեն կոտորում է: Ֆրանկ Հակոբ վարորդը նույնքան խռպոտ ու ժանգոտ ձայնով հայհոյանքներ է թափում՝ գլուխը պատուհանից հանած:

Նայում է նրան ու բան չի հասկանում, մեքենան մոտենում է, ուր որ է գցելու է տակը, ճզմի... Վերջին վայրկյանին կոպալ կնիկը նետվում է առաջ ու դուրս քաշում նրան մայթ...

- Քու դիրու պապ...- Ֆրանկ Հակոբի կեղտոտ հայհոյանքը լսվում է փողոցով մեկ,- մլեմ իդա քու խորոչտի... Իդա քու մամ... Փորձանք պիտի բերեր գլխուս...

Դղրդոցով մեքենան անցավ ու կորավ սեփական փոշու ամպերի մեջ: Գնում էր Քոլագերանի երկաթգիծ: Ամբողջ շրջանը երկաթ ու պղինձ էր հավաքում: Դպրոցում այդ գործը Կարոն էր գլխավորում: Պղինձը մեծ մասամբ թեյնիկներ էին, ինքնաեռներ, կաթսաներ, սափորներ: Պատահում էին շատ գեղեցիկ իրեր, պարզապես արվեստի գործեր: Հավաքում էին դպրոցի բակում ու կռանով ճզմում, ջարդում, տեսքից գցում, որ Ֆրանկ Հակոբը կամ մեկ ուրիշը չգայթակղվի ու յուրացնի: Ընկնում էին դռնեդուռ ու ստիպում, որ հանձնեն այդ պղնձյա իրերը: Ռազմաճակատին պետք էր:

Քեռին, հրեն՝ հացը կռնատակին, արագ-արագ գնում է, փախչում է... Անհետացավ:

Մոսո, ճրբ ես վերադառնալու, ես սոված եմ...

Նամակը դրանից առաջ էր գրել, թե՞ հետո: Երևի առաջ, կամ՝ ո՞վ գիտի, կամ՝ ի՞նչ կարևոր է...

Էս ո՞ւր ենք հասել... Ապարանն անցել, իջնում ենք Սպիտակ... Ավտոբուսում ջահելները անեկդոտներ են պատմում ու բարձրաձայն խրխնջում: Սրամիտ ու տափակ, հին ու նոր, անմեղ ու ոչ այնքան, անեկդոտների տարափ է տեղում: Միմյանց հերթ չեն տալիս, մեջլիս: Ով ինչ էլ պատմեր՝ ծիծաղում էին. ծիծաղն իներցիայի ուժ ունի, որ մեկ սկսվեց...

Հենց իր առջևը տեր ու տիկին էին նստած: Տերը տարիքոտ էր, գունատ, նիհար դեմքը, խորն ընկած խոշոր աչքերը վկայում էին նրա մտավորական լինելը: Հագուստն էլ չնայած մաքուր ու կոկիկ էր, բայց հին լինելը կասկած չէր թողնում: Երևի ինչ-որ տեղ կրտսեր գիտաշխատող է. գիտության քուրմ... Ամուսնուց զգալիորեն ջահել, դուրեկան և՛ դեմքով, և՛ մարմնով տռուզ տիկինը, հնաոճ հովհարով (երևի տատից մնացած) բերանը փակելով, մանրիկ-մանրիկ ծիծաղում է. առանձնապես սեռական երանգներով անեկդոտները նրան շատ են դուր գալիս:

- Էլյա, անհարմար է, վերջացրու: Լսել այս գռեհկությունները և... Կուլտուրական կին ես վերջապես:

- Չէիր ուզում լսեմ՝ տաքսի վարձեիր: Ականջներս բամբա՞ն խոթեմ:- Հանդուգն ու չար ֆշշացրեց Էլյան:

Գուցե կուլտուրական է, բայց կին է, մտածեց Կարոն, առողջ, թարմ, դեռ ուր ես, որ սա պառավի: Իսկ դու ցամաքել ես, էն չես, էն չես... Երևի տեղկոմից Լոռվա ձորերում հանգստանալու տասներկու օրվա ուղեգիր են ստացել: Էս կնոջ բնույթն ինչպես ես սանձելու, Լոռվա ձորերում անկուլտուրական ու բիրտ որձեր կան...

Կարո տղա, էս քեզ օրինակ, որ Ռոզիկից ձեռ քաշես: Ճիշտ է՝ գիտնական չես, բայց... բայց ցամաքելու վրա ես:

Չէ, չհամբերեց մտավորականի նուրբ հոգին.

- Տղաներ, բավական է, մեքենայում կանայք կան: Ինչպես կարելի է...

- Ասում, խոսում, ուրախանում ենք, էլի, ախպեր, քեզ ինչ վնաս:

- Վերջապես տարեց կանայք կան, գոնե նրանցից...

-Քու կողքինը ջահել է...

- Խուլիգան,- ծղրտաց մտավորականը ու տեղից բարձրացավ:

Տորք Անգեղի նման մեկը մղվեց ընդառաջ.

- Դե՛, դե՛, դե՛, լեզուդ քեզ քաշիր, տեղդ նստիր: Կարգին խոսեցինք հետը: Ոտդ քամակիցդ կպոկեմ...

- Վերջացրեք, թե չէ մեքենայի դունչը շուռ եմ տալի ձորը, հա՜մ...

Վարորդի սպառնալիքը լուրջ էր, թե կատակ, բայց բոլորը սսկվեցին: Մթնոլորտը, իհարկե, փչացավ. անհարմար լռություն տիրեց... Էս խեղճ մարդը տասներկու օր հանգստանալո՞ւ է, էս կնոջ հետ...

Նստարանների արանքներում կապոցների վրա նստած մի կին օֆ-օֆ արեց, բացեց ուտելիքի բոխչան, դրեց գոգը ու սկսեց կճպել պինդ եփած հավկիթները: Թարխունով դուռումներ անելով սկսեց բաժան-բաժան անել:

- Կուշտ մարդիկ բարի են լինում, կերեք, ձեզ մատաղ, կերեք, որ կռիվ չլինի:

Ինքն էլ էր բարի, առատաձեռն, հյուրասեր: Երևի սրա տաշտը միշտ լիքն է. ձեռքերի մաշկը արևախանձ, մատները՝ կոշտացած, գործի սովոր: Արարող մարդիկ կան աշխարհում, օրինակ, Մոսոն: Մոսոն՝ կա, հացը՝ կա: «Ես գնամ քարին, քարը կկանաչի», ասում էր Մոսոն ու խանգարող քարը շուռ տալիս, գլորում մի կողմ:

Հանկարծ Կարոն զգաց, որ կողքի կարմրաթուշիկ տղամարդը անընդհատ ձեռքը դնում է իր ծնկանը, ինչ-որ բան է պատմում իբր, իբր պատահաբար: Զգաստացավ: Նոր գլխի ընկավ, որ օձանելիքի հոտը ոչ թե Էլյայից է, այլ սրանից... Սա էլ է գնում Լոռի բախտը փորձելու, ով գիտի... Սրա ձեռքը կրկին հայտնվեց իր ծնկան վրա...

Կարոն դմբզեց էնպես, որ սրա մատները ճտճտացին: Օյ արեց կարմրաթուշիկն ու նոր քաշվեց մի կողմ: Սսկվեց: Էդպես:

Մոսոն թուխս դնել էլ գիտի, հավկիթ ջոկել, ճուտը ձվում մաշուր անել: Գարնանը կճեպից նոր դուրս եկած ճուտիկներին լցնում էր մաղի մեջ, դուրս բերում արևի տակ: Սվսվում էին դեղին գնդիկները, ծանոթանում արևին, աշխարհին: Մոսոն երեխայի նման ուրախանում էր. ա՛յ քեզ հավես... Աշնանը Մոսոյի բակը լիքը հավ ու ճիվ էր:

Չալիկ-մալիկ մի վառեկ ուներ, նայում էր ու խնդում.

- Հլա տես ինչքան ա սիրուն... Կաքավ ա, կաքավ... Եկող տարի սրան թուխս եմ դնելու իր ձվերով, սիրունները թող շատանան:

Կուտը լցնում էր հսկա ափի մեջ ու կանչում բարակ ձայնով՝ ծիկ, ծի՛կ, ծի՛կ: Վառեկը գիտեր՝ իրեն է կանչում պատիվ անելու, ինքն առաջինն էր: Անվարան թռչում էր նրա թևին ու կուտն ափից հավաքում:

Վառեկ դու վառեկ, չալպտուրիկ, սիրունիկ՝ գնալով փարթամացավ, գեղեցկացավ: Մի օր էլ հանկարծ խեղդվելով կանչեց՝ ծրուղրուղրու... Մոտավորապես ծուղրուղու, չհասունացած աքլորի նման: Զարմացած Մոսոն ուսերը ծուլ արավ.

- Էսպես բան չէինք տեսել...

Հաջորդ օրը կուտ շաղ տալիս աչքը դրա վրա էր: Վառեկը կուտը հավաքեց, քուջը լցրեց ու մեկ էլ թևերը թափ տվեց ու ավելի հաստատուն՝ ծրուղրուղրու...

Խեղճ Մոսո. շվարեց, շփոթվեց: Ասացի.

-Մոսո, էդպես բան պատահում է բնության մեջ, ներքին օրգանները փոխվում են, սեռը կարող է փոխվել, հորմոնները...

- Ո՞նց... Սատանի գործ ա, այ տա:

Խոսքի հետ կատվի նման ճանկը գցեց, բռնեց վառեկի վզից, թափ տվեց ու՝ ճըկ, գլուխը մնաց ձեռին: Արյունը թշշացնելով, շաղ տալով՝ անգլուխ վառեկը թպրտաց բակով մեկ:

- Տար գցի արտաքնոցը,- կարգադրեց,- սրա միսը հարամ ա... Ծուղրուղուն աքլորը պիտի կանչի: Իմ տանը որձը որձ մնա, էգը՝ էգ:

Ավտոբուսը մխում է անվերջ, մուխն էլ լցվում է հենց վերջը: Հուրախություն մտավորականի, նրա տիկինը այդ շմոլից բժժել է, գլուխը դրել նրա ուսին, սսկվել:

Անասելի տհաճ է, սիրտը խառնում է, բայց ամաչում է խնդրել, որ մեքենան կանգնեցնեն: Տեղ չկա, որ գոնե մի քիչ երկար ոտքերը պարզի, ծնկները համարյա կպչում են կզակին:

Էլյան ուշքի եկավ, գլուխը թափ տվեց, ֆոթացրեց ամուսնու վրա, շեղակի կռնակը շուռ տվեց դեպի նա:

«Հարամ անտեր, ծուղրուղու ա կանչում»...

Քանի՞ սիգարետ կլինեմ ծխած այսօր:

Թողնեմ:

Քեզ ղեկավարելու ընդունա՞կ ես որ:

Ինքդ քո մեջ ես խճճվել:

Հետո՞:

Իմ հոգին տագնապած, իմ աշխարհը խառնաշփոթ...

Մոսոյի հետ ինչ-որ մեծ պարկերի բերաններ էին կարում, մախաթներով: Անասելի խճճված մեծ կծիկ թել էր: Ամեն անգամ ինքը երկար փնտրում էր թելի ծայրը, չարչարվում էր: Մոսոն մեկ նայեց, երկու նայեց, չդիմացավ.

- Էդ ի՞նչ ես անում:

- Ման եմ գալիս թելի ծայրը:

- Տո խելոք, դրա ծերը կգտնվի՞: Մկրատով կտրի մի կտոր, մախաթդ վռազ թելի, գործդ առաջ տար:

«Մկրատով կտրի, գործդ առաջ տար»:

Ինչո՞ւ եմ վախենում երջանիկ լինելուց...

«Որ տեսնում ես ձիդ քացի տվան ա, փոխի, ռադ արա»:

Մոսո՛, Մոսո՛, քեզ համար ամեն ինչ պարզ է, հստակ է: Պրիմիտիվ մարդ...

Վառեկի պոկած վզից արյունը խփում է շատրվանի պես, գետնին թպրտում է:

Սառնասիրտ, դաժան մարդ, վճռե՞ց՝ վերջ: Մարդ չի, կացին է...

Կյանքում հազար նրբություններ կան, սա սևն ու սպիտակը գիտի միայն, անթիվ երանգներ կան... Շրը՛խկ, առանց դանակի վիզը պոկեց ու վերջ:

Կարծր, ամբարիշտ... էմանսիպացիա, ֆեմինիզացիա, ազատ սեր...

«Էգը՝ էգ կենա...»:

Ես իմ էսօրվա աշխարհն ուզում եմ տեղավորել Մոսոյի երեկվա կյանքի մեջ: Անհնար բան. Մոսոն փակ է նորի համար, փակ էլ կմնա, Մոսոն դեռ իր Եգոր պապի հետ է ապրում...

Որսորդներն արջ էին բռնել անտառում, ինքը դեռ երեխա էր: Ընդարձակ մի բակում կապել էին, որ մարդիկ տեսնեն զվարճանան: Ինքն էլ գնաց դիտելու: Հաստ թոկով գազանի վիզը օդ էին արել, երկու կողմից պինդ ձգել: Խեղդոց. ո՛չ աջ, ո՛չ ձախ. ամեն կտրուկ շարժումի հետ խեղճ գազանը ցավից բառաչում էր...

Թքած, թքած, էլ չեմ ուզում հիշել, չեմ ուզում մտածել: Զզվել եմ, հոգնել եմ, ինքս ինձնից եմ հոգնել: Կյանքդ գողացան ու այլևս վերջ, վերջ...

ՄՈՎՍԵՍ

Իմ ռազմի դաշտի ընկերն ի՞նչ եղավ... Զինամթերքը հիմա էլ առանց նրա էին տանում դիրքերը: Ուրիշ մասում, ուրիշ գնդում: Ողջ մնաց, թե՞ չէ, տուն հասա՞վ, նշանածին գտա՞վ: Ռսի երգեր էր երգում սրտաճմլիկ ու թախծոտ, հոգի էր քանդում:

- Մոիսեյ, բրատ մոյ, նու ի վտյանուլ տի մենյա վ էտո դելո... Լուչշե վ օկոպախ բիտյ... էս մեր բեռը, որ մի օր պայթեցրին, երկուսս էլ կթռչենք մինչև լուսին, ձիերով...

Պայթեցրին, վերջը պայթեցրին: Լուսին չթռա, բեկորն եկավ կողս ճղեց, իմ աչքով իմ աղիքները տեսա, իմ ներսը տեսա...

Բա հինգից մեկը բախտ չունի՞, որ ես փրկվեմ էս դժոխքից... Կարեցին, կարկատեցին, բաց թողին տուն: Լա՞վ եղավ, թե՞ վատ, որ եկա. չգիտեմ, չգիտեմ...

Բոլորն էլ մտածկոտ են, թախծոտ են, հոգսաշատ: Բա ինչի՞ եկա... Ես ձեզ չեմ հասկանում, դուք՝ ինձ: Եկա, որ անտեր չմնաք, անհեր

չմնաք, բայց հիմա ես եմ մենակը... էդպես, ինչպես կաք, առանց ինձ էլ կլինեիք: Կրթված ու հիվանդոտ, առաջադեմ ու տխուր, բանիմաց ու տկար: Ինձնից ինչ սովորեցիք... Եկա, որ ձեզ կապեմ էս հողին: Բայց դե ձեր միտքը սավառնակներով ա թռչում, ես ինչ...

Շարմաղ օձն էլ չեկավ, խռովեց ու խռովեց: Կամ էլ բան չունի ասելու: Դե գնացողին ինչ ասես, որ՝ ինչ...

Ցավի ամենաթունդ երակը մեջքիցս ա գալիս, ուսերս խտտում ա, սողում դոշերիս վրա, հասնում ձեռքերիս: Ախր իմ ձեռքերը ոսկի են, ափսոս են...

Կարո, Կարապետ... Չեկավ:

Քանդվեց տղեն, փչացրին... Մատղաշ-մատղաշ իրանցով արին, ես հեռու մնացի կանգնած, դե մորթեք իմ գառը, կերեք... Իմ ոսկի տղեն... Թող ների, եթե կարող ա...

Նաստյա, դու էլ ներիր...

Ուհաննես ջան...

Մանր ու փշոտ անձրև է մաղում Լոռիում: Շեղակի շերտերով մի տեսակ չարացած ծակծկում է Կարոյի երեսը: Երկինքը մթնդած, սև ամպերը սեփական ծանրությունից իջել են, սեղմվել գետնին:

Կարոն վաղուց է իջել ավտոբուսից: Ոտքերը նրան տուն չեն տանում: Թաց շորերը կպել են մարմնին, սառն է, բայց ինքը չի զգում... Մոսոյին ասելիք չունի, ժամանակավրեպ է ամեն ինչ ու անիմաստ: Աչքերը փակելիս թող ների ինձ, եթե կարող է...

«Հարամ ջրի» կողքով բարձրանում է դեպի անտառ, դեպի սարերը: Ինչո՞ւ, ինքն իրեն հաշիվ չի տալիս, պարզապես անտառ տանող մանկության արահետն է անասելի ծանոթ, քայլում է:

Մեծ առու է էս ջուրը, սկիզբ է առնում ինչ-որ տեղ սարերում, գալիս անցնում է իրենց փոքրիկ քաղաքի միջով: Անունը դրել են Հարամ ջուր, իրենք հարամում են ու անուն դնում...

Իսկապես կեղտոտ էր, վրան արտաքնոցներ էին շինել, կլոր տարին մարդիկ իրենց աղբն ու կեղտերը լցնում էին նրա մեջ: Սատկած շուն ու կատու մշտապես փտում էին նրա դանդաղ, ալարկոտ ջրերում, ափերին դեմ առած: Ամառվա շոգերին գարշահոտություն էր փչում:

Բայց տարին մեկ, երկու կատաղում էր հանկարծ առուն, հին

ափերը քանդում, ավերածություններ էր անում, համբերությունը հատած ինքն իրեն մաքրում էր, նորանում, բայց միևնույն է՝ աղբը նորից ու նորից լցնում, լցնում, լցնում էին...

Անընդհատ ինչ-որ բանի սպասել, արմատական մի շրջադարձի, որ մեկ ուրիշն անելու է, իսկ դու վայելելու ես: Մեկ ուրիշը քո փոխարեն քո կյանքի հունը փոխելու է: Հասարակությունն ազնվանալու է, մարդիկ մաքրվելու են իրենք իրենց... Դու ճիգ չգործադրես, բայց ստեղծվի մի այնպիսի վիճակ, որ հնարավոր լինի շնչել:

Մի ամբողջ կյանք, պոչերին քարշ գալով սպասել հրաշքի... Էդպես ոչինչ չանելով ու ծերանալով... Ու ծերացար, ու գնա...

Գրեթե հասել էր անտառի տակը: Կանգ առավ: Ափն այստեղ բարձր էր, նայեց ցած. խեղդված ոչխարը ծուլորեն լողում էր ջրերի մեջ. մեկ դեմ էր առնում քարին, մեկ հոսանքի ուժը պտտում, պտտում էր ու դարձյալ մղում առաջ: Տձև ու անկանոն շուռումուռ էր տալիս լեշը՝ մեկ մեջքի վրա, մեկ փորի, մեկ վիզը երկարացնում, ձգում էր առաջ: Ու մեկ էլ կողք կողքի էր տանում՝ վիզը գցում փորի տակ... Դանդաղեցրած կինո... Կարոն երկար-երկար նայեց ու ժպտաց դառը:

Հանկարծ հիշողությունը փայլատակեց. էսպես էր, այո, երևի հենց այս տեղերում, ինքը ալիքների մեջ գլխկոնձի տալով, քարերին զարնվելով... Սարերի գլխին, հեռուներում ճայթում էին կայծակները, ամպերն ահարկու գոռում, որոտում էին՝ աշխարհը դղրդացնելով...

Այո. հիշեց հստակ, զիլ մանրամասն, պարզ...

Իրենց գլխին երկինքն արևոտ էր: Հնձի տեղից էին վերադառնում, դեռ կոլխոզ չկար, Մոսոն հողեր ուներ: Եկան ու դեմ առան այս առվին, որ խելագարվել էր, սեփական ափերը ջարդել: Սայլերը հերթով եկան ու շարվեցին: Նույնիսկ Մոսոյի աժդահա, մեծաբաշ ձիերը խրտնեցին. ականջները խլշկոտացնելով ֆռթացնում էին անհանգիստ ու հետ-հետ գնում: Սելվորները մտրակներն օդում թափահարելով, հեղեղի վայրագ գոռոցից խլացած, ճչալով մտքեր էին փոխանակում.

- Այ տա՛, սա էս որտե՞ղ ա էսպես կատաղել...

- Սարերում սելավ ա, սելավ... Հրե հա՛, հրեն հա՛...

- Սա բարակողը չի էսօր...

- Ասա անձրևը շուռ չգա էս կուռը...

- Սրան էսպես տեսած չկայինք...

-Այ տա, դե ասա գիշերս մնացինք էստեղ...

Կարոն հազիվ վեց-յոթ տարեկան, երևի հենց այս նույն բարձունքից հմայված նայում էր ներքև: Դեղին, պղտոր ջուրը հետը հսկա քարեր էր գլորում, արմատախիլ վիթխարի ծառեր, ջարդելով, փշրելով, ամենը իրար խառնելով՝ ցասկոտ մռնչոցով քշում էր ցած: Հանդարտիկ, համեստ առուն, որի անունը ներքևներում Հարամ էր, գազան էր կտրել, պատռում էր ափերը, քանդում էր ափամերձ հողերը, շերտ-շերտ զանգվածներով տակովն անում ու քշում: Ափամերձ ժայռերն արդեն ցցված էին մերկացած կողերով: Ալիքներն ամեհի ուժով զարկում էին դրանց, ծառս լինում, կաղկանձում ցավից, մի ակնթարթ միայն պտտվում տեղում ու նոր թափով, ավելի հանդուգն հարձակվում ժայռերի վրա: Կարծես խնդիր ունեին հիմնահատակ անելու նաև դարավոր ժայռերը:

Պար էր, խաղ էր խելակորույս, իր ճանապարհին ամեն ինչ կործանող վայրենի ուժ էր՝ անսանձ, անկառավարելի: Ու հմայված, ու կլանված ցած էր նայում երեխա Կարոն, ու խառնվել-ձուլվել էր տարերքին... Տարերքի անհաղթահարելի ուժը ձգում էր, վարակում, քաշում դեպի իրեն:

Թռիչք, թռիչք, թռիչք... Մի պահ խելագարվեց ինքն էլ, զրկվեց դատողությունից, ներշնչվեց, դարձավ այս ուժի մի մասնիկը ու զիլ ճչոցներով տեղում ցատկոտեց. ինքն էլ դարձավ հեղեղ անզուսպ, վերջին անգամ մի զիլ կանչեց ու... նետվեց ցած:

Դեռ օդում լսեց Մոսոյի վայրագ գոռոցը:

Ալիքը հրճվանքով գրկեց նրան ոտից գլուխ, հռհռալով կոխեց տակը, կոլոլեց, դուրս շպրտեց ափ, դարձյալ հարձակվեց, չանթեց ու տրորելով, հունցելով, ծեծելով, խաղուպարով տարավ... Սելավը զոհ էր ուզում:

Մի ակնթարթ միայն Կարոյի գլուխը դուրս ցցվեց ջրի տակից. օդը կուլ տվեց ու տեսավ Մոսոյին դիմացի ժայռից կառչած: Կարոն ժպտաց, երևի հասցրեց ժպտալ հորը... Ալիքը նրան տանում էր հենց դեպի Մոսոն, բայց վերջին պահին նետեց կողքի հորձանուտը: Մոսոն

սպասում էր էս խարդախությանը, հա՛յ, գոռաց Մոսոն ու նետվեց առաջ... Զռված, սարսափած աչքերով նայեց հորը, լաց եղավ ու ձեռքերով, ոտքերով փաթաթվեց նրան:

- Վիզս թող,- ատամների արանքից մռնչաց Մոսոն,- վիզս թող, խեղդում ես...

Թվում էր չկա այն ուժը, որ Կարոյին պոկի Մոսոյից, բայց Մոսոն Մոսոն է՝ թափ տվեց, ազատվեց, շրջեց մեջքով դեպի իրեն, օձիքն առավ ատամների արանքը, ալիքների հետ գնաց-գնաց հարմար տեղ գտնելու, ծագին փրկելու:

Փրկեց...

Իսկ հետո՞:

Հետո ինչո՞ւ ինձ մենակ թողեց, չփրկեց Դոդոխյանների, Բաղդագուլյանների ճիրաններից... Ստից, կեղծիքից, լկտի լրբերից:

Հայր, ժամանակը, ժամանակը...

Ապրածդ կյանքը երկար ու ձիգ միջանցք, անցար, բոլորի դռները փակ էին: Դրանց հետևում մեղքե՞ր կան, ամոթնե՞ր կան, ստորությո՞ւն, պարտություննե՞ր, կամ գուցե սրբություննե՞ր... Զմռսված են, չես իմանա: Ոմանք մի քանի դուռ միշտ բաց են պահում, մարդկայնության, բարության ողորմելի մի քանի փշրանք՝ ի տես ամենքի, ի տես հանրության...

Ոչ ոք ոչ մեկին երբեք չի պատմելու, որովհետև ինքն էլ է մեղք գործելու: Իր բաժին մեղքը...

Մարդը պետք է որ ինքն իրեն պատժի...

Խավարը խտացավ: Անձրևը, մանր ու խիտ, թվում է վերջ չի ունենալու: Շուրջն ամեն ինչ թաց էր, սառը, տհաճ: Կարոն դանդաղ քայլերով շարժվում է դեպի անտառ... Ահա հասավ թփուտներին, ծառերին ու ծանոթ արահետով խորք, խորք, խորք... Մանկությունից դեռ նշմարած մի ծառ ունի:

Կա՛ց, Կարապետ, ո՞ւր ես գնում: Քեզ ներիր, դու չես մեղավորը, մեղքը քոնը չէ, ժամանակն էր ընդհատվել... Անտառից դուրս արի, գնա հորդ տուն: Աղոթք արա: Քո եկեղեցին հորդ տունն է, Աստված քեզ այնտեղ է սպասում... Մութ անտառից դուրս արի, Կարապե՛տ...

1992-1994 թթ.